




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԹԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

ԿԱՐԼ ՄԱՐԳՍԻ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԹԵՈՐԻԱՆ

Դաժ. Ավալբեգյան.

Теория Экономического  
Развития Карла Маркса







98105  
A 50486

# ԿԱՐԼ ՄԱՐԺՍԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹԵՈՐԻԱՆ

ՅԵՐԿՐՈՂ, լրացած հրատարակություն





Գրառեսպիար № 680բ.

Տիրած 1000.

---

Տպարան ՀԵՐՄԵՍ Հրատարակչություն, Յերևան, Մարքսի փողոց № 29.









Գ. Վ. ՊԼԵԽԱՆՈՎ,  
1856–1918



ԳԵՈՐԳԻ ՎԱԼԵՆՏԻՆՈՎԻՉ

ՊԼԵԽԱՆՈՎԻ

հիշատակին

նրա ծննդյան 70-ամյակի

(1856—1926)

ու

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ Կազանյան հրապարակի

բանվորական ցույցի 50-ամյակի

(1876—1926)

առթիվ







Անկասկած, այս յերևույթի դեմ անհրաժեշտ է պայ-  
քարել: Հարկավոր է ժողովրդականացնել վոչ միայն մարք-  
սիստական քաղաքատնտեսությունն, այլ և կարլ Մարքսի  
տնտեսական զարգացման թեորիան, վոր այնքան ընդար-  
ձակում է ընթերցողի պատմական հայացքի հորիզոնը և  
նրան գլխավոր հնարավորություն է ընձեռում ավելի լավ  
ու խոր ըմբռնելու մի կողմից՝ պատմական մատերիա-  
լիզմն ու մյուս կողմից՝ մարքսիստական քաղաքատնտե-  
սությունը:

Ճիշտ է, մարքսիզմի հիմնադիրներինց վոչ մեկը սիս-  
տեմատիկ չէ շարադրել տնտեսական զարգացման թեորիան,  
հիրավի, այս խնդրին վերաբերող մտքերը շաղ են տրված  
նրանց բազմաթիվ յերկերում, անտարակույս է, վոր նույնը  
կարող ենք ասել նրանց ավագ աշակերտների նկատմամբ  
ել,—սակայն և այնպես անհնարին չէ ուսումնասիրել յե-  
ղածը և ի մի բերելով՝ ցույց տալ թեորիայի ամբողջու-  
թյունն ու հետևողականությունը:

Ներկա գրքույկն արգասիք է մի ձգտման—շարադրե-  
լով տնտեսական զարգացման թեորիան այն կերպարանքով,  
ինչպես գտնում ենք կարլ Մարքսի գրվածքներում, զգու-  
շացնել վոչ միայն այն թեորիաներինց, վորոնք բացահայտ  
հակամարքսիստական են ճանաչված, այլև այնպիսիներինց,  
վորոնք՝ մարքսիստական կոչվելու հավակնությամբ ու  
«մարքսիզմի» դիմակով քարոզում են տնտեսական զար-  
գացման մասին միանգամայն խոտելի գաղափարներ:

## II.

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹԵՈՐԻԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ

Ի՞նչ է ուսումնասիրում տնտեսական զարգացման  
թեորիան և ի՞նչ տարբերություն ունի քաղաքատնտեսու-  
թյունինց ու տնտեսական զարգացման պատմությունինց:



Քաղաքատնտեսության առարկան հասարակություններին արտադրական-տնտեսական հարաբերություններին, տնտեսական կառուցողիաներին ու սրանց որենքներին ուսումնասիրությունն է: Քաղաքատնտեսությունը հետազոտում է, որինակ, թե ինչ է աշխատանքը, ինչ է արժեքը, հավելյալ արժեքը, ապրանքը, փողը և այլն <sup>1)</sup>:

Իսկ տնտեսական զարգացման թեորիան ուսումնասիրում է հանրային-արտադրական ֆորմացիաներն ընդհանրապես, սրանց ելությունը, ծագումը, զարգացումն ու հաջորդականությունը՝ յերևան հանելով սրանց մեջ թաղնված որենքները:

Տնտեսական զարգացման թեորիան չպետք է շփոթել տնտեսական զարգացման պատմության հետ: Վերջինս ուսումնասիրում է տվյալ մասսայի կամ տերրիտորիայի տնտեսական կոնկրետ զարգացումը դարերի ընթացքում, որինակ, թե ինչպես է զարգացել և տարբեր ժամանակա-

<sup>1)</sup> Յ ե Ր կ Ր Ո Ր Դ հ Ր ա տ ա Ր ա կ ու թ յ ա ն ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Մեր այս տողերից կարելի չէ և անհրաժեշտ է յեզրակացնել, վոր մենք չենք ընդունում քաղաքատնտեսության այն ըստ ամենայնի սխալ վորոշումը, թե այս գիտական դիսցիպլինայի ուսումնասիրության առարկան «ապրանքային-կապիտալիստական տնտեսությունն է միայն» և վոչ թե նաև մյուս, մինչ կապիտալիստական ու հետ-կապիտալիստական տնտեսությունները: Ըստ Ենգելսի, քաղաքատնտեսությունը պետք է ուսումնասիրե «այն պայմաններն ու ձևերը, վորոնցում տարբեր մարդկային հասարակություններն արտադրել, փոխանակել և սրա համապատասխան ել բաշխել են արդյունքները»: Քաղաքատնտեսության զարգացած չլինելու հետևանքով է, ասում է նա, վոր մեր գիտելիքները «սահմանափակվում են համարյա բացառապես արտադրության կապիտալիստական յեղանակի ծագումով ու զարգացմամբ»: Այնինչ պետք է հետազոտել մինչ-բուրժուական տնտեսություններն ել, մի ասպարեզ, վորտեղ մինչև այժմ միակ աշխատանք կատարողը յեղել է Մարքսը: «Այսպիսի լայն ծավալով քաղաքատնտեսությունը դեռ պետք է ստեղծվի», — կտակել է Ենգելսն եպիգոններին: (Փ. Энгельс. „Анти-



շրջաններում ինչ վիճակ է ունեցել Հայաստանի, Ռուսիայի, Յեվրոպայի կամ համաշխարհային տնտեսությունները և այլն: Տնտեսական զարգացման պատմությունն ունի յուր բազմաթիվ ճյուղերը—աշխատանքի պատմություն, յերկրագործության պատմություն, առևտրի, արդյունաբերության ու այլոց պատմություններ, վորոնք իրենց հերթին ունեն: բազմազան ու բազմաթիվ յենթաճյուղեր:

Տնտեսական զարգացման թեորիան գործ չունի տրնտեսության կոնկրետ վիճակի ուսումնասիրության հետ, այլ հետազոտում է տնտեսական զարգացման ընդհանուր շրջանները, ետապները, փուլերը միայն:

Ինչպես վոր բնագիտությունը բյուրավոր ու միլիոնավոր յերևույթներն ու առարկաներն առանձին առանձին ուսումնասիրելու փոխարեն հիշյալները վեր է ածում խմբերի և այս խմբերն է ուսումնասիրում (դասակարգում—классификация), ինչպես վոր պատմությունը յերկար

Дюринг“, Москва-Ленинград, 1923, էջ 134-135): Փոխանակ այս կտակի իրագործման մասին տքներու ու ճգնելու՝ Մարքսի ու Ենգելսի անունով յերգվող բազմաթիվ ներքինի իմաստակներ, որինակ, Լ. Լյուբիմով, Ի. Ռուբին ու նրանք, վորոնց անունը լեգենն է, քաղաքատնտեսության շրջանակները նեղացնում են սաստիկ և սահմանափակում «կապիտալիստական» ու կամ «ապրանքային-կապիտալիստական (!?) տնտեսությամբ՝ մինչ-կապիտալիստական ու հետ—կապիտալիստական տնտեսությունների նկատմամբ յուրորինակ ազնոստիցիզմի ճանապարհ հարդարելով: Ուրախակի է, վոր վերջին ժամանակներս ոռւս մարքսիստական գրականության մեջ տնտեսագիտական ազնոստիկների դեմ խիզախ պայքար է սկսել հայտնի մարքսիստ տնտեսագետ Ի. Ստեպանովը: Հմմտ. И. Степанов. „Что такое политическая экономия“. „Под знаменем марксизма“, журнал, Москва, 1925, № № 1—2, այլ և „Вестник Коммунистической Академии“, 1925, № 11: Նույն մտքերն Ստեպանովը շարադրում է նաև այն առաջարկում, վոր կցել է յուր ու Ս. Բոգդանովի „Курс политической Экономии“ գրքի 1 հատորի 4-րդ հրատարակությանը, (Москва-Ленинград, 1925):



ժամանակի ընթացքում կատարված հանրային յերևույթ-  
ներն ու փոփոխությունները համախմբում է՝ հիշյալներն  
առանձին շրջանների կամ պերիոդների վերածելով (պար-  
բերացում—периодизация),—այնպես էլ, տնտեսական  
զարգացման թեորիան տնտեսական զարգացման ամբողջ  
ընթացքը բաժանում է շրջանների, ետապաների կամ փու-  
լերի, այսինքն յուր հերթին դիմում է պարբերացման՝  
տնտեսության հազամյա ու դարավոր փոփոխությունները  
մի ընդհանուր հայացքով պատկերացնելու համար:

Տնտեսական զարգացման թեորիան տնտեսական զար-  
գացման պատմությանը վերաբերում է այնպես, ինչպես  
հասարակագիտությունը (սոցիոլոգիան) ընդհանուր ու ազ-  
գային-ժողովրդական պատմություններին: Փոխաբերու-  
թյամբ ասած՝ տնտեսական զարգացման թեորիան տնտե-  
սական զարգացման հանրահաշիվն է, իսկ տնտեսության  
պատմությունը՝ նրա թվաբանությունը:

### III.

#### ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԻՄՈՒՆՔԻ ՇՓՈԹՈՒԹՅՈՒՆ

Կարգ Մարքսի տնտեսական զարգացման թեորիայի  
շարադրանքի (изложение) ժամանակ անհրաժեշտ է  
շոշափել հետևյալ խնդիրները.

1. վորոշել բաժանման այն հիմունքը (fundamen-  
tum divisionis), վորով Մարքսը կատարում է տնտեսական  
զարգացման պարբերացումը կամ պերիոդիզացիան,

2. տալ բուն պարբերացումը, վորով Մարքսը թվում  
է հանրային արտադրական ֆորմացիաները կամ այլ խոս-  
քով՝ սահմանում է տնտեսական զարգացման փուլերը,

3. մատնանշել տնտեսական զարգացման պարբերաց-  
ման այն վերապահությունները, վոր արել են մարքսիզմի  
հիմնադիրները և



4. ուրվագծել տնտեսական զարգացման թեորիայի ձևավորումը 4. Մարքսի յերկերում:

Սկսենք նախ բաժանման (ներկա դեպքում սլարբերացման) հիմունքից:

Ձևական տրամաբանությունը սովորեցնում է, վոր յերևույթները, առարկաներն ու հետևաբար նաև գաղափարները խմբելու ժամանակ նկատի յե առնվում նրանց մի հատկանիշը: Որինակ, յերբ յերկրաչափությունը յեռանկյունները բաժանում է յերեք խմբի—ուղանկյուն, սրանկյուն, բթանկյուն յեռանկյուններ—ապա այս բաժանումը կատարում են՝ հիմք ընդունելով անկյան մեծությունը: Այն հատկանիշը, վորով կատարվում է բաժանումը, կոչվում է բաժանման հիմունք: Նույն ձևական տրամաբանությունը դասակարգման որենքներն անցնելիս սլահանջում է, վոր բաժանման ժամանակ բաժանման հիմունքի փոփոխություն չկատարվի, այսինքն մի անգամ վերցրած բաժանման հիմունքն անշեղ կիրառվի մինչև վերջ: Բոլորին հասկանալի յե, վոր սխալ կլիներ յեռանկյունիները բաժանել ուղղանկյուն յեռանկյունիների, գեղեցիկ յեռանկյունիների ու փայտե յեռանկյունիների: Այսպես վարվել՝ կը նշանակեր մեկ բաժանման ժամանակ կիրառել բաժանման յերեք հիմունք՝ նկատի ունենալով սկզբում յեռանկյունի ձևի անկյան մեծությունը, ապա յեռանկյան վորակը, վերջում՝ յեռանկյան նյութեղենը (material):

Սրանք տարրական բաներ են, և շատերին կարող են այսպիսի բացատրությունները ծիծաղելի թվալ, սակայն շուտով կտեսնենք, թե ինչպես տնտեսական զարգացման թեորիա կերտելիս՝ ամեն քայլափոխում վտանահարվում են տրամաբանության նույն այս տարրական ու ամենքին հասկանալի սլահանջները: Յեվ այն, ինչ վոր մաթեմատիկայի ու ձևական տրամաբանության մեջ կրում է բաժանման հիմունքի շփոթություն անմեղ անունը, տնտե-



սական զարգացման թեորիայի մեջ ասպարեզ ե հանում մի լուրջ հիվանդություն, վոր հայտնի յե եկեկտիզմ ա-  
նունով:

Ահա մի քանի որինակ:

Եմիլ Վանդերվելդն «Արդյունաբերության զարգացու-  
մըն ու հասարակարգը» վերնագրով հայտնի աշխատու-  
թյան մեջ տնտեսական զարգացումը բաժանում ե հետև-  
յալ շրջանների.

1. փակ տնային տնտեսություն,

2. փոխանակային տնտեսություն յերեք յենթափու-  
լերով.

ա) քաղաքային տնտեսություն:

բ) ազգային (ժողովրդական) տնտեսություն,

գ) միջազգային տնտեսություն ու վերջապես

3. սոցիալիստական տնտեսություն: <sup>1)</sup>

Այս հենց ճիշտ յեռանկյան ծիծաղելի բաժանման տա-  
ռացի պատճենն ե: Հեղինակը բաժանումը կատարել ե  
նախ ըստ փոխանակության ձևերի (հմմտ. 1 ու 2), ապա՝  
ըստ արտադրության կազմակերպության (հմմտ. 3), իսկ  
յենթափուլերի ժամանակ անշեղ սլահականել ե տնտեսու-  
թյան ծավալի սկզբունքը՝ գնալով նեղից, փոքրից դեպի  
ընդարձակը, մեծը: Այսպիսով՝ մեկ պարբերացման ժա-  
մանակ բաժանման յերեք հիմունք ե կիրառվել:

Եզուարդ Բերնշտեյնը «Տնտեսական կյանքի ձևերի  
զարգացումը» գրքույկում տվել ե տնտեսական զարգաց-  
ման այս պարբերացումը.

1. նախնադարյան ժողովուրդների տնտեսություն—  
նախնադարյան կոմմունիզմ,

2. շրջիկ ցեղերի տնտեսություն—տնային ու գյու-  
ղական համայնքներ,

<sup>1)</sup> Эмиль Вандервельд. „Промышленное развитие и об-  
щественный строй“. Изд. „Молот“. Одесса, 1905, էջ 10—17:



3. քաղաքների ծագումն ու փոխանակային տնտեսություն,
4. հնադարյան կուլտուրական ժողովուրդների տնտեսություն,
5. ֆեոդալական ժամանակաշրջանի տնտեսություն,
6. կապիտալիստական տնտեսության առաջին ձև,
7. զարգացած կապիտալիստական տնտեսություն,
8. սոցիալիստական տնտեսություն <sup>1)</sup>):

Այս պարբերացման մեջ տիրապետող բաժանման հիմունքն արտադրության կազմակերպությունն է (հմմտ. 1, 4, 5, 7 և 8), յերկու դեպքում իբրև հիմունք կիրառված է փոխանակության ձևը (հմմտ. 2 ու 3), իսկ մեկ անգամ ել միևնույն տնտեսության յերկու աստիճանները վերցված են իբրև տնտեսական զարգացման տարբեր փուլեր (հմմտ. 6 ու 7):

Զարմանալի չէ, վոր նման սխալների հանդիպում ենք նաև Կարլ Կաուցկու կատարած պարբերացման մեջ, վոր տվել է «Հողային հարցը» վերնագրով կլասիկ աշխատության մեջ, տնտեսական զարգացման հետևյալ ձևերով.

1. բնատնտեսություն,
2. ֆեոդալական տնտեսություն,
3. համաքարային մենաշնորհյալ տնտեսություն,
4. պարզ ապրանքային տնտեսություն,
5. կապիտալիստական տնտեսություն ու
6. սոցիալիստական տնտեսություն <sup>2)</sup>):

Առաջին հայացքից հենց նկատելի չեն պարբերացման բազմաթիվ հիմունքները: Մեկ վերցրած է արտադրության կազմակերպությունը կամ արտադրական հարաբերություն-

<sup>1)</sup> Эдуард Бернштейн. „Развитие форм хозяйственной жизни“, пер. П. Б. Розенберг, под ред. А. П. Берлина, СПб, 1905.

<sup>2)</sup> К. Каутский „Аграрный вопрос“, пер. под редакцией Н. А. Рожкова, Москва 1906, № 55.



ները (հմմտ. 2, 5 ու 6), յերբեմն սպառման կամ փոխա-  
նակության ձևը (հմմտ. 1), մերթ միևնույն տնտեսու-  
թյան յերկու հատվածները (հմմտ. 2 ու 3, այսինքն ֆեո-  
դալական տնտեսությունը գյուղում ու ապա քաղաքում)  
և վերջապես միևնույն տնտեսության տարբեր աստիճան-  
ները (հմմտ. 4 ու 5)<sup>1</sup>։

Տնտեսական զարգացման թեորիաների մեծամասնու-  
թյան թերությունը հիշյալ գիծն է, տրամաբանական տեր-  
մինով ասած՝ բաժանման կամ պարբերացման հիմունքի

1) Բ. հ. ր. ա. տ. ծ ա ն ո թ.։ Տնտեսական զարգացման թե-  
որիայի տեսակետից հետաքրքրական է նաև Կառլցկու այն ա-  
ռաջարանը, վոր կցված է Սալվիոլու «Կապիտալիզմն անտիկ աշ-  
խարհում» գրքին։ Սալվիոլին պնդում է, թե «Մարքսը (տնտեսա-  
կան զարգացման փուլերի. Թ. Ա.) վոչ մի կլասսիֆիկացիա չի ա-  
ռաջարկել, այլ միայն բանալի է տվել պատմությունը բացա-  
տրելու համար»։ (Դ. Сальвиоли. „Капитализм в античном ми-  
ре“. пер. Р. Гальперина, изд. 2-е, Харьков, 1923, էջ 16)։ Կա-  
ռլցկին ընդունում է, վոր Մարքսը «վոչ մի տեղ ստույգ ու  
պարզորոշ չէ շարադրել» յուր ըմբռնումը տնտեսական զարգաց-  
ման մասին, բայց, — ավելացնում է, — նրա ասելիքը յեզրակացնել  
հնարավոր է, յեթե մարդ հավաքե Մարքսի՝ այս նյութի վերա-  
բերմամբ արած «ցաք ու ցրիվ դիտողությունները և սրանցից  
բղխող մեթոդը կիրառե տնտեսական պատմության հայտնի իրո-  
ղությունների նկատմամբ», Այս ընթացքին հետևելով Կառլցկին  
տալիս է դժբաղտարար վոչ թե տնտեսական զարգացման փուլե-  
րի «ստույգ ու պարզորոշ» պարբերացում, այլ նույն զարգացման  
մի սխեմա, վորից դժվար է յեզրակացնել, թե ինչ ընդհանուր հա-  
ջորդականությամբ ու ինչ փուլեր է ընդունում նա։ Բայց և այնպես  
նկատելի է, վոր այս սխեման տարբերվում է «Հողային հարցի» մեջ  
տված պարբերացումից։ Սխեմայի մեջ մասնավորապես ուշագրավ  
է Կառլցկու հավաստումը, թե «Մարքսն արտադրության ամենա-  
քնական յեզանակ ընդունում է նախնադարյան կոմմունիզմը»  
(Սալվիոլու գրքի առաջարան, էջ 4-6)։



փոփոխութիւնը կամ շփոթումը, իսկ իդեոլոգիական տերմինով ասած՝ մուրացածո եկեկտիզմը<sup>1)</sup>։

## IV.

## ՍՊԱՌՈՒՄ, ԲԱՇԽՈՒՄ, ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական զարգացման պարբերացման ժամանակ պետք է անշեղ կիրառել բաժանման մեկ հիմունք միայն։ Պետք է վերցնել տնտեսության մեկ հատկանիշը միայն։

1) Այսպիսի եկեկտիզմով տոգորված ու տարածված գրքերից պետք է հիշատակել Բ. Богданов. „Краткий курс экономической науки“ (վորեն հրատարակութիւն) Ա. Ի. Տյումենեւի «Աշխատանքի պատմութիւնը», թարգ. Թադ. Ավդալբեգյանի, Յերևան, 1924 ու մանավանդ Բ. Тюменев. „Очерк истории экономического быта“, Петроград—Москва 1923.

Բ. հրատ. ծանոթ.։ Բողդանովը տալիս է տնտեսական զարգացման այսպիսի պատկեր.

1. Բնատնտեսութիւն, վոր ունի հետեյալ յենթափուլերը.  
ա. Նախնադարյան տոհմական կոմմունիզմ,  
բ. Ավտորիտար տոհմային համայնք,  
գ. Ֆեոդալական հասարակութիւն.

2. Փոխանակային տնտեսութիւն, վորի յենթափուլերն են.  
ա. Ստրկատիրական տնտեսութիւն,  
բ. Ճորտատիրական տնտեսութիւն,  
գ. Արհեստային-քաղաքային տնտեսութիւն,  
դ. Կապիտալիզմ. և վերջապես

3. Սոցիալիստական տնտեսութիւն։

Տյումենեւի վերջին գիրքը—„Очерк истории экономического быта“—ավելի ցայտուն է ներկայացնում նրա պարբերացումն, քան վորի տնտեսական զարգացման փուլերն են.

1. Նախնադարյան տնտեսութիւն,  
2. Համայնական տնտեսութիւն,  
3. Կալվաժային տնտեսութիւն,  
4. Քաղաքային տնտեսութիւն,  
5. Ազգային տնտեսութիւն ու  
6. Համաշխարհային տնտեսութիւն։



Սակայն վորը:

Մարքսիստական տեսակետից տնտեսության եյու-  
թյունը կազմում է վոչ թե սպառումը, վոչ թե բաշ-  
խումն, այլ արտադրությունն, ուստի և տնտեսական զար-  
գացման պարբերացման ժամանակ պետք է բաժանման  
հիմունք ընդունել (ու մինչև վերջ անշեղ կիրառել) ար-  
տադրությունը միայն:

«Սպառումն արտադրության մի մոմենտն է», — ասում  
է Մարքսը <sup>1)</sup>:

«Այսպես կոչված բաշխման հարաբերությունները,  
— նկատում է նույնը — ծնունդ են առնում արտադրության  
պրոցեսի պատմականորեն վորոշ, առանձնահատուկ հան-  
րային ձևերից»... <sup>2)</sup>

«Հասարակության պատմական զարգացման ընթաց-  
քում արդյունքների փոխանակման յեղանակը վորոշողը  
յեղել է արտադրության յեղանակը» <sup>3)</sup>:

Մի այլ տեղ Մարքսը մի նախադասության մեջ է  
ամփոփում վերոգրյալ մտքերը:

«Սպառման, բաշխման ու փոխանակության վորոշ  
ձևերը պայմանավորողն արտադրության վորոշ ձևն է» <sup>4)</sup>:

Ահա այս նկատառումով մարքսիստական տեսակետից  
մերժելի յեն տնտեսական զարգացման այն բոլոր թեո-  
րիաները, ինչ ցուցանակ էլ վոր կրելիս լինեն, վորոնք  
պարբերացման հիմունք չեն ընդունում արտադրությունը:

1) Karl Marx. „Zur Kritik“, 3 Auflage, Stuttgart, 1909, էջ  
XXVII կամ К. Маркс. „К критике политической экономии.“  
Изд. „Московский Рабочий“, Москва, 1922, էջ 19:

2) Маркс. „Капитал“, III<sup>2</sup>, Москва, 1907, էջ 413:

3) Маркс. „Нищета философии“, пер. С. А. Алексеева,  
изд. 2-е, Одесса, 1905, էջ 49:

4) „Zur kritik“, էջ XXXIV, „К критике“, էջ 23—24.



Յերբ Բրունո Հիլդեբրանդը տնտեսական զարգացման փուլեր ե դնում

1. բնատնտեսությունը,
2. դրամատնտեսությունը,
3. վարկատնտեսությունը,

Գուստավ Շմոլլերը՝

1. ցեղային տնտեսությունը,
2. գյուղական-շրջանային տնտեսությունը,
3. քաղաքային տնտեսությունը,
4. տերրիտորիալ տնտեսությունը,
5. պետական տնտեսությունը,

Իսկ Կարլ Բյուխերը՝

1. փակ տնային տնտեսությունը,
2. քաղաքային տնտեսությունն ու
3. ժողովրդական տնտեսությունը,—

այն ժամանակ մենք խոստովանում ենք, Վոր նրանց պարբերացումը բավարարություն տալիս ե բաժանման մեկ հիմունքով անշեղ պարբերացում կատարելու պահանջին, ընդ վորում առաջինը նկատի ունի փոխանակության ձևերն, իսկ յերկրորդն ու յերրորդը տնտեսության ծավալը կամ արդյունքի՝ արտադրողից մինչև սպառողը տանող ճանապարհի յերկարությունը, սակայն նրանք տնտեսական զարգացման թեորիան կառուցում են ավագի վրա, յերբ հիմք չեն ընդունում արտադրությունը։ Հիլդեբրանդը, Շմոլլերը, Բյուխերը քայլում են ձևական տրամաբանության շավղով, սակայն նրանք զուրկ են տնտեսագիտության կողմնացույցից <sup>1)</sup>։

<sup>1)</sup> Ձևական տրամաբանության շավղով անկողմնացույց քայլող հեղինակների բանական ե անցնում նաև Պ. Մասլովը, վորը յուր „Общедоступный курс истории народного хозяйства“ (Петроград, 1914) գրքում տալիս ե տնտեսական զարգացման



## V.

## ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ

Տնտեսութեան մեջ ելականն արտադրութեանն է: Բայց արտադրութեանը մի բարդ յերևույթ է, և արտադրութեան ասելով մեկը կարող է առնել արտադրութեան ճյուղերը, յերկրորդն՝ արտադրութեան միջոցները, մի ուրիշն՝ արտադրական հարաբերութեանները: Միթե այս յերեքի ասածն էլ հավասարապես ճիշտ է:

Ահա, որինակ, Ֆրիդրիխ Լիստը յուր տնտեսական զարգացման հետևյալ հինգ փուլերով.

1. վորսորդական տնտեսութեան,
2. հովվական տնտեսութեան,
3. յերկրագործական տնտեսութեան,
4. յերկրագործական-արդյունաբերական տնտեսութեան,
5. յերկրագործական-արդյունաբերական-առևտրային տնտեսութեան:


Այս թեորիայի հեղինակը բավարարութեան է տալիս յերկու պահանջին էլ. պարբերացումը կատարել է մեկ բաժանման հիմունք (վոր է արտադրական ճյուղերը կամ մարդկանց զբաղմունքը) մինչև վերջ անշեղ կիրառելով, մյուս կողմից՝ անտես է արել սպառումը, բաշխումն ու փոխանակութեանը և նկատի յե ունեցել ընդհանրապես

մի թեորիա, վորը վոչ այլ ինչ է, բայց յեթե Շմոլլեր-Բյուխերի թեորիայի մի ջրիկ վարիանտ:

Բ. հրատ. ծանոթ.: Ըստ Մասլովի տնտեսական զարգացումն անցնում է այս փուլերով.

1. Մեկուսացած տնտեսութեան,
2. Համայնական տնտեսութեան,
3. Ռայոնական տնտեսութեան,
4. Ազգային տնտեսութեան ու
5. Համաշխարհային տնտեսութեան:

«Կ. Մարքսի տնտ. զարգ. թեորիան» — 2.





արտադրությունը միայն: Միթե այսքանը դեռ բավական  
չէ տնտեսական զարգացման ճիշտ թեորիա ստեղծելու  
համար:

Վնչ, և ահա թե ինչու:

Արտադրության ճյուղը կամ մարդկանց զբաղմունքը  
չէ կարող բնորոշել հանրային-արտադրական ֆորմացիան:  
Ճիշտ է, դեռ 1859 թվին «Քաղաքատնտեսության քննա-  
դատության ներածության» մեջ Մարքսն ընդունում էր,  
վոր «հանրային բոլոր ձևերի ժամանակ լինում է արտա-  
դրության մի վորոշ ճյուղ, վոր գերիշխում է մյուս բոլո-  
րին և վորի պայմանները վորոշում, ցույց են տալիս ար-  
տադրության մյուս բոլոր ճյուղերի տեղն ու ազդեցու-  
թյունը»<sup>1)</sup>, սակայն և այնպես Մարքսը սրանով չէ հեր-  
քում յուր հիմնական միտքը, թե կարևորն արտադրության  
կազմակերպությունն է կամ արտադրական հարաբերու-  
թյունները:

Արտադրական տարբեր հարաբերությունների ժամա-  
նակ կարող է գերակշռող գոյություն ունենալ արտադրու-  
թյան միևնույն ճյուղը, կամ այլ խոսքով, մարդկային  
միևնույն զբաղմունքը տարբեր ժամանակաշրջաններում  
հիմնովին տարբեր արտադրական կազմակերպություն է  
ունենում: Առնենք, որինակ, յերկրագործությունը: Արտա-  
դրության այս ճյուղը գերակշռող էր թե հնագարյան Հնդ-  
կաստանում, թե Իտալիայում կայսերության ժամանակ,  
թե միջնագարյան Գերմանիայում ու թե Ռուսաստանում  
XX-րդ դարի սկզբին: Սակայն ինչ նմանություն այս  
չորս յերկրի հողագործության միջև: Մի տեղ յերկրագոր-  
ծությամբ զբաղվում է հնդիկ ազատ շինականն, ազատ  
համայնիկը (համայնքի անդամ—общинник), վորը բա-  
ցի հողից, տեր է արտադրության մյուս բոլոր գործիքների,  
մի այլ տեղ լատին ստրուկը, յերրորդ տեղ՝ գերմանացի

<sup>1)</sup> „Zur kritik“, էջ XLIII, „К критике“, էջ 30:



ճորտն ու չորրորդ վայրում, ասենք կապիտալիստորեն վարվող տնտեսության մեջ, յերկրագործական պրոլետարն, իրավապես ազատ, սակայն միանգամայն սեփականագուրկ մշակը (ծառքակ):

Արտադրության ճյուղը բաժանման հիմունք ընդունելիս վերանում ենք մարդկային հարաբերություններից, մարդկային համակեցության ձևերի վրա ուշադրություն դարձնելուց, ձևեր, վորոնք են հենց ամենից շահագրգռականը, և ուշադրություն ենք դարձնում առարկաների վրա, վորոնք ինքն ըստ ինքյան անտարբեր որբեկտներ են: Արտադրության ճյուղերի վրա ուշադրություն դարձնում ե այն հոգեբանությամբ մարդը, վորին հետաքրքրում են առարկաները, բարիքները, կուտակումը, իսկ արտադրական հարաբերությունների վրա՝ այն գաղափարախոսն ու թեորեաիկը, վորի համար կարևոր ե շահագործման արմատները գտնելը: Վերջինիս չե հետաքրքրում, թե ինչ ե արտադրվում—վո՞րս, մսացո՞ւ, ցորե՞ն, թե՞ մանուֆակտուրա, այլ թե վորոնք են այն պայմանները, վոր հնարավոր են դարձնում շահագործումը, լինի այս շահագործողը, Մարքսի սրաթև խոսքով ասենք, «աթենացի kalos kagathos-ը, ետրուսկ. նվիրապետը (meokpat), civis romanus-ը, նորմանդացի բարոնն, ամերիկացի ստրկատերը, վալախ բոյարինը, արդի լենդլորդը թե՞ կապիտալիստը»...

Արտադրական հարաբերությունների, այսինքն շահագործումն հնարավոր դարձնող պայմանների վրա ուշադրություն դարձնում ե նա, ով շահագրգռված ե շահագործման վերացումով:



## ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Արտադրութեան ճյուղերն իբրև բաժանման հիմունք ընդունելը ժխտելուց հետո՝ մեզ մնում է ընտրությունն անել արտադրող ույթերի ու արտադրական հարաբերությունների միջև:

Մարքսի յերկերում կան շատ հատվածներ, վորոնք կարծեք թե ապացուցում են, վոր մարքսիզմի հիմնադիրը տնտեսական զարգացման թեորիա մշակելիս՝ պետք է կանգ առներ արտադրող ույթերի վրա: Այսպես, որինակ, ո՞վ չի հիշում նրա հետևյալ սրաթև խոսքը «Փիլիսոփայութեան աղքատութեան» մեջ.

«Երկանքն (ручная мельница) ստեղծում է սյուզերենով հասարակություն, իսկ շոգեաղացը՝ արդյունաբերական կապիտալիստով հասարակություն»<sup>1)</sup>:

1873 թվին՝ «Կապիտալի» յերկրորդ հրատարակութեան ժամանակ Մարքսը գոհունակութեամբ ավելացնում էր այս պարբերությունը.

«Պատմագրությունը մինչև այժմ վորքան ել վոր քիչ գիտե նյութական արտադրութեան, հետևաբար և հանրային ամբողջ կյանքի հիմքի, ուստի և իրական ամբողջ պատմութեան մասին, այնուամենայնիվ գոնե մինչ-պատմական ժամանակաշրջանները բաժանման են յենթարկում վոչ թե այսպես կոչված պատմական հետախուզությունների վրա, այլ բնագիտական հիմունքների վրա հենվելով, ըստ գործիքների ու գեներների նյութեղենի՝ անվանելով քարե դար, բրոնզե դար, յերկաթե դար»<sup>2)</sup>:

«Տնտեսական դարաշրջանները, — կարդում ենք մի

<sup>1)</sup> „Нищета философии“, էջ 79:

<sup>2)</sup> Karl Marx, „Das Kapital“, B. I. 6-e Auflage, Hamburg, 1909, էջ 143. К. Маркс. „Капитал“, т. I. Москва, 1909, էջ 145:



այլ տեղ, — տարբերվում են իրարից վոչ թե նրանով, թե ինչ է արտադրվում, այլ նրանով, թե ինչպես, աշխատանքի ինչ գործիքներով է արտադրվում»<sup>1)</sup> ):

Այս ու նման հատվածների վրա հիմնվելով պնդել, թե Մարքսի տեսակետից հանրային-արտադրական ֆորմացիաների համար վորոշիչ նշանակութուն ունեն վոչ թե արտադրական հարաբերություններն, այլ արտադրության միջոցները կամ արտադրող ույթերը, — սխալ պիտի համարել:

Ի՞նչպես, — կառարկե յուրաքանչյուր իրազեկ, — չե՞ վոր ընդհանրապես պատմական ու մասնավորապես տնտեսական զարգացման պատճառն արտադրիչ ույթերի զարգացումն է: Չե՞ վոր անթիվ վկայություններ կարելի յե բերել այս մասին: Կամ գուցե, — կավելացնեն նրանք, — Մարքսը պարբերացման համար յերկու տարբեր հիմունք է առաջադրել:

Պետք է պատասխանենք, վոր մեծ շփոթություն կարող է առաջ գալ, յեթե, ինչպես այլ ասպարեզներում, այնպես և այստեղ չզանազանենք յերևույթի պատճառն ու յերևույթի եյությունը: Սրանք տարբեր գաղափարներ են:

Ի՞նչն է մարմինների կարծր, հեղուկ ու գազային գրության պատճառը: — Անշուշտ ջերմությունը: Իսկ ի՞նչն է կազմում մարմինների տարբեր կացությունների եյությունը: Ի՞նչով են տարբերվում, որինակ, սառույցը, ջուրը ու գոլորշին իրարից: Ի հարկե իրենց մասնիկների փոխադարձ ձգողության աստիճանով: Ջերմությունը պատճառն է, իսկ մասնիկների ձգողության տարբեր աստիճանը՝ յերևույթի եյությունը:

Ճիշտ նմանապես ել տարբեր բաներ են այն պատճառը, վոր առաջ է բերում հանրային-արտադրական վորոշ ֆորմացիա, ու այն հատկանիշը, վորով բնորոշվում է

<sup>1)</sup> Das „Kapital“, B. I, էջ 142, „Капитал“ I, 145:



հիշյալ ֆորմացիան: Արտադրող ույժերի զարգացումը պատճառ է հանրային-արտադրական ֆորմացիաների առաջ գալու, զարգացման ու անկման, սակայն այս ֆորմացիայի ելուժյունը կազմում են մարդկանց՝ արտադրության պրոցեսում ունեցած փոխադարձ հարաբերությունները: Վերջիններիս արմատական փոփոխությամբ մեզ ներկայանում է մի նոր ֆորմացիա:

Խնդիրը բոլորովին կպարզվի, յեթե համեմատենք կապիտալիստական տնտեսակարգը սոցիալիստականի հետ:

Կապիտալիզմը մի հանրային-արտադրական ֆորմացիա չե՝ հիմնված մեքենային արդյունաբերության վրա: Սոցիալիզմը նույնպես մի հանրային-արտադրական, սակայն տարբեր ֆորմացիա չե, վոր խարսխված է վոչ թե արտադրության նախնադարյան միջոցների, վոչ թե տնայնագործական տեխնիկայի, այլ դարձյալ մեքենային արդյունաբերության վրա: Արտադրության միջոցների տեսակետից կապիտալիզմի ու սոցիալիզմի միջև տարբերություն չկա: Այնտեղ՝ մեքենային արդյունաբերություն, այստեղ ել՝ մեքենային արդյունաբերություն: Վո՞րն է հապա կապիտալիզմի ու սոցիալիզմի տարբերությունը:

— Արտադրական հարաբերությունները:

«Արտադրության ժամանակ մարդիկ վորոշ հարաբերությունների մեջ են մտնում վոչ միայն բնության, այլ և մեկ մեկու հետ: Արտադրելու համար նրանք պետք է միացած գործեն և իրար հետ վորոշ փոխադրեցության մեջ մտնեն:... Արտադրության նյութական միջոցների, արտադրող ույժերի փոփոխության ու զարգացման հետ փոփոխվում են արտադրության հասարակական հարաբերությունները: Արտադրական հարաբերությունների ամբողջությունը կազմում է այն, վոր կոչվում է հանրային հարաբերություններ, հասարակություն և ամեն մի առանձին դեպքում կազմում է պատմական զարգացման»



վորոշ աստիճանի վրա կանգնած հասարակություն, վոր ունի վորոշ, իրան միայն հատուկ բնույթը»<sup>1</sup>):

## VII.

### ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Այսպիսով ուրեմն կարևորը վոչ թե այն է, թե ինչ է արտադրվում, այլ այն, թե ինչպես է արտադրվում, այսինքն թե ինչ պայմաններում է արտադրվում: Կարևորն

<sup>1</sup>) Կարլ Մարքս. «Վարձու աշխատանք ու կապիտալ», թարգմ. Ստեփան Շահումյանի, (խմբագրությամբ Թադ. Ավդալբեգյանի), Յերևան, 1921, էջ 28-29:

Բ. հրատ. ծանոթ.: Ռուս մարքսիստներից յերկուսը— Մ. Ն. Պակրովսկին ու Ն. Ռաժկովն—այն հեղինակներից են, վորոնք տնտեսական զարգացման վորոշ թեորիայով առաջնորդվելով մի յերկրի—ներկա դեպքում՝ Ռուսաստանի տնտեսության պատմությունն ուսումնասիրել են մասնագիտորեն և այս ուսումնասիրության բովից անցկացնելով տվել են տնտեսական զարգացման՝ վորոշ չափով յուրահատուկ թեորիա: Ըստ Պակրովսկու՝ տնտեսական զարգացումն, ի միջի այլոց նաև Ռուսաստանինն, ընթացել է և ընթանում է հետևյալ փուլերով.

1. Նախնադարյան ցեղային կամ ընտանեկան հավաքական տնտեսություն,

2. Անհատական արհեստային տնտեսություն,

3. Կապիտալիստական տնտեսություն ու

4. Սոցիալիստական տնտեսություն:

Մ. Ն. Պակրովսկու այս թեորիան, վոր գտնում ենք նրա „Очерк истории русской культуры“ գրքում (часть I, 4-е изд. Москва-Ленинград, 1925, էջ 19—29, հատկապես էջ 28) թեյև ընդհանուր առմամբ բավարարում է արտադրական հարաբերությունները պարբերացման հիմունք ընդունելու պահանջին, սակայն բուն պարբերացումը գլուխ հանելու տեսակետից կաղում է: Բավական է հիշեցնել, վոր տնտեսական զարգացման այնպիսի նշանավոր փուլեր, վորպիսիք են ստրկատիրությունն ու ճորտա-



արտադրական հարաբերություններն են: Սակայն ինչպե՞ս հասարակական ու տնտեսական հարաբերություններն, այնպես և արտադրական հարաբերությունները միանման ու միապադաղ չեն, այլ բազմազան, բազմատեսակ:

Դեռ տասնյակ տարիներ սրանից առաջ մարքսիզմի խոշորագույն թեորետիկներից մեկը—Պլեխանովը Պյոտր Ստրուվեյի դեմ մղած հայտնի բանավեճի ընթացքում՝ փոշիացնում էր հակառակորդին՝ մատնանշելով, թե ինչպե՞ս մարքսիզմի այս «քննադատը» չի կարողանում զանազանել արտադրական հարաբերությունների տարբեր տեսակները: Արժեքը,—ժպտալով բացատրում էր ոուս մարքսիզմի հիմնադիրը,—արտադրական հարաբերություն է, մրցումն էլ արտադրական հարաբերություն է, աշխատանքի արհեստանոցային կազմակերպությունն էլ, կապիտալն էլ,

տիրությունը, չեն կազմել առանձին ֆորմացիաներ, այլ բռնադրոսիկ կերպով մուծված են 2-րդ, այն է՝ անհատական-արհեստային տնտեսության մեջ:

Շատ ավելի լայն ու խոր է մտածված Ն. Ռաժկովի թեորիան, վորը տնտեսական զարգացումը շրջանների է բաժանում՝ բոլորի նկատմամբ էլ հիմք ունենալով վեց հատկանիշ հետևյալ կարգով. այն է՝ ա. տնտեսության գերիշխող ճյուղը, բ. հողատիրութան ձևը, գ. տնտեսության ձևը, դ. տեխնիկան կամ արտադրության սխեման, ե. բաշխումն ու զ. հանրային հարաբերությունները: Նա ընդունում է չորս շրջան՝ սրանց առաջին, յերկրորդ յերրորդ ու չորրորդ անունը տալով: Այս հանգամանքն անհնարին է դարձնում Ռաժկովի թեորիան հակիրճ շարադրելը: Բայց և այնպես տնտեսությունների հատկանիշների թվարկության այն կարգը, վոր բերինք և վորին հետևում է այս տնտեսագետ-պատմաբանը, մանավանդ այն հանգամանքը, վոր առաջին հատկանիշ ընդունված է տնտեսության գերիշխող ճյուղը, ցույց են տալիս, վոր Ռաժկովի թեորիան ազդված է վոչ միայն Մարքսից, այլ և մասամբ տոգորված է հատկապես Ֆրիդրիխ Լիստի վոդով: Հմմտ. Н. Рожков. „Эволюция хозяйственных форм“. СПб, 1905 ու դարձյալ նրա „Город и деревня в русской истории“, Петроград, 1919.



Ա վոր մեկն ասեմ: Արտադրական հարաբերությունների վոր տեսակն է, — հարցնում եր Պլեխանովը, — վոր սկզբում համապատասխան է լինում արտադրող ույթերի վիճակին, ապա հակասում է սրանց, իսկ այս հակասությունն առաջ է բերում հին հասարակությունը պայթեցնելու կարիք<sup>1)</sup>:

Ահա այս գաղտնիքը չե՞ր կարողացել լուծել Ստրուվեն: Սրան հայտնի չե՞ր այն իրողությունը, վոր մարքսիզմը յերկու տեսակի է բաժանում բուն արտադրական հարաբերությունները.

1) անմիջական արտադրողների արտադրական հարաբերություններ, վորոնք անկախ են, չեն հիմնվում նույն արտադրողների՝ արտադրության միջոցների նկատմամբ ունեցած հարաբերությունների վրա ու

2) արտադրության պրոցեսսին մասնակցողների (վոչ միայն անմիջական արտադրողների, այլ և արտադրության այլ գործակալների) արտադրական հարաբերություններ, վորոնք հիմնված են հիշյալ մասնակցողների՝ արտադրության միջոցների նկատմամբ ունեցած հարաբերությունների վրա: <sup>2)</sup>

Առաջին հարաբերությունը բղխում է արտադրության տեխնիկական հատկություններից, այնինչ յերկրորդն արտադրության միջոցների բաշխման հետևանք է:

Արտադրության միջոցների բաշխումը չպետք է շփոթել արդյունքների բաշխման հետ: Վերջինիս ձևը բղխում է առաջնի ձևից:

«Բաշխումն արտադրանքների բաշխում լինելուց առաջ 1) արտադրության գործիքների բաշխումն է ու 2)

<sup>1)</sup> Н. Бельтов (Г. Плеханов). „Критика наших критиков“, СПб, 1906, էջ 27 ու հետևյալները:

<sup>2)</sup> Հմմտ. Н. Бухарин. „Теория исторического материализма“, 3-е изд. Москва-Петроград, էջ 277—279 ու հետ., այլ և „Архив К. Маркса и Ф. Энгельса“, под. ред. Д. Рязанова, книга I. Москва, 1924, էջ 403—405 (Ա. Ուղալլցովի հոդվածը):



(վոր միևնույն հարաբերության հետագա վորոշումն է) հասարակության անդամների բաշխումն է արտադրության զանազան տեսակների միջև... Յերբ տրված է արտադրության սկզբնական մոմենտը կազմող բաշխումը (այսինքն՝ արտադրության միջոցների բաշխումը), սրա հետ տրված է արտադրանքների բաշխումն էլ»։ <sup>1)</sup>

«Կապիտալ»-ի Բ. հատորում Մարքսը բացատրում է, թե վորպեսզի արդյունաբերական կապիտալիստը փող (Փ) տալով շուկայում գնե ապրանք (Ա), այսինքն մի կողմից՝ արտադրության միջոցներ (Ամ), իսկ մյուս կողմից՝ բանվորական ույժ (Բ) և հետո վերջին յերկուսը գործարանում միացնելով արտադրություն կազմակերպե, ապա անհրաժեշտ է, վոր նախորոք արտադրության միջոցներն ու բանվորական ույժը բաժանված լինեն իրարից, այսինքն շուկայում առանձին առանձին գոյություն ունենան թե Ամ, վորոնք սպասում են բանվորական ույժին ու թե Բ, վոր գուրկ է արտադրության միջոցներից։

« $\Phi - Ա < \overset{Բ}{Ամ}$  ակտի հիմքը կազմում է բաշխումը, — գրում է Մարքսը, — սակայն վոչ այն բաշխումը, վոր հասկանում ենք բառի սովորական առումով, այլ բուն իսկ արտադրության տարրերի բաշխումը, վորի ժամանակ նյութական տարրերը համակենտրոնանում են մի կողմում, իսկ բանվորական ույժը, վոր մեկուսացած է նրանցից, մյուս կողմում»։ <sup>2)</sup>

Վերջապես հիշեցնենք նաև «Կապիտալ»-ի III<sup>2</sup> հատորի հայտնի գլխից — «բաշխման հարաբերություններն ու արտադրական հաբաբերություններ» վերնագրով գլխից — ծանոթ հատվածը, վոր վերաբերում է դարձյալ արտադրության միջոցների բաշխմանը։

<sup>1)</sup> „Zur kritik,“ էջ XXX, „К критике“, էջ 21։

<sup>2)</sup> К. Маркс. „Капитал“, т. II, Москва, 1907, էջ 9։



«Բաշխման այս ձևերը, վորի մասին հենց նոր խոսեցինք, պատվանդան են հանդիսանում այն առանձնահատուկ ֆունկցիաների, վոր բուն իսկ արտադրական հարաբերությունների ժամանակ բաժին է ընկնում արտադրության վորոշ փորձիչների, վորոնք հակադրվում են անմիջական արտադրողներին: Բաշխման այս ձևերն արտադրության պայմաններին ու սրանց ներկայացուցիչներին տալիս են հատուկ հանրային վորակ: Բաշխման այս ձևերն են վորոշում արտադրության ամբողջ բնույթն ու շարժումը»<sup>1)</sup>:

## VIII.

## ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որինակով պարզենք 1) արտադրության տեխնիկական հարմարությունից բխող արտադրական հարաբերությունների ու 2) արտադրության միջոցների բաշխումից բխող արտադրական հարաբերությունների տարբերությունը:

Ահա հնձի տեսարանն արտում: Վոմանք գերանդի յեն քաշում, վոմանք փոցխում են, մյուսները լասում են (դարսում են շերտ շերտ) մեկեղները խուրձ են կապում, ուրիշները դիզում են, մնացածները բարձում են սայլին և այլն: Գերանդավորների, փոցխողների, լասողների, խուրձ կապողների, դիզողների, բարձողների հարաբերություններն արտադրական հարաբերություններ են, բայց սրանք շարունակ գոյություն կունենան անկախ այն հանգա-

<sup>1)</sup> „Капитал“, III<sup>2</sup>, Москва, 1908, էջ 409: «Սպառման միջոցների ամեն մի բաշխում հենց արտադրության միջոցների բաշխումից բխող հետևանք է միայն: Իսկ արտադրության միջոցների բաշխումն է կազմում արտադրության բուն իսկ յեղանակի բնույթը»: К. Маркс. „Критика Готской программы“, Петроград, 1919, էջ 19:



մանքից, թե ումն են պատկանում արտադրության միջոցները—հողը, գերանդին, փոցխը, յեղանը, սայլը, անասունները և այլն: Այս հարաբերությունները բղխում են հնձի տեխնիկական հարմարություններից, վորոնք կարող են նույնը լինել ստրկատիրության, ճորտատիրության ու այլ շրջաններում ել:

Սակայն յենթադրենք, վոր արտն ու արտադրության մյուս միջոցները պատկանում են վոչ թե բոլոր անմիջական արտադրողներին, այլ նրանցից մի քանիսին կամ մի բոլորովին այլ մարդու, վոր նրանց աշխատեցնում է արտում: Այս դեպքում առաջ է գալիս մարդկանց միջև մի նոր տեսակի հարաբերություն արտադրության պրոցեսի ընթացքում: Արտադրության պրոցեսի մասնակիցները բաժանվում են յերկու խմբի, վորոնք տարբեր հարաբերություն ունեն արտադրության միջոցների նկատմամբ: Մի խումբը զուրկ է արտադրության միջոցներից, իսկ մյուս խումբը տեր է արտադրության միջոցների: Սրա հետևանքով մարդկանց հարաբերություններն այլևս սովորական հարաբերություններ չեն. այսուհետև նրանց հարաբերություններն արտադրության միջոցների նկատմամբ ունեցած հարաբերությունից բղխող հարաբերություններ են, ներկա դեպքում՝ արտադրության միջոցներից զուրկ արտադրողներին ու արտադրության միջոցների սեփականատերերին հարաբերություններ են: <sup>1)</sup> Արտադրական այս

1) Բ. հրատ. ծանոթ.: «Արտադրության պայմանների սեփականատերերին անմիջական հարաբերությունը դեպի անմիջական արտադրողները,—մի հարաբերություն, վորի յուրաքանչյուր տվյալ ձևն ամեն անգամ բնականորեն համապատասխանում է աշխատանքի յեղանակի զարգացման վորոշ աստիճանին, ուրեմն և աշխատանքի հանրային արտադրիչ ույժին,—ահա թե ինչ բանի մեջ ենք միշտ գտնում և յերևան հանում ամբողջ հասարակարգի ամենախորին գաղտնիքն, ամենաթաքուն հիմքը»: Маркс. „Капитал“, III<sup>2</sup>, էջ 320.



տեսակի հարաբերությունները բղխում են գույքի նկատմամբ ունեցած հարաբերությունից, ուստի իրավաբանական տերմինով կոչվում են գույքային հարաբերություններ: Արտադրական իրական հարաբերությունն արտահայտվում է 8, 9, 10 ժամյա բանվորական որվանը վերաբերող իրավաբանական ակտի, որենքի մեջ:

Դառնալով վերևի որինակին՝ պետք է մի լրացում անենք: Արտում աշխատողները կարող են լինել արտի ու գործիքների տերը: Սակայն նրանք կարող են նրանց տերը չլինել, այլ աշխատել ուրիշի արտում և ուրիշի գործիքներով: Առաջին դեպքում անմիջական արտադրողները միաժամանակ նաև արտադրության միջոցների սեփականատեր են: Յերկրորդ դեպքում անմիջական արտադրողներն ու արտադրության միջոցների սեփականատերերը տարբեր մարդիկ են: Սակայն յերկու դեպքում էլ հիշյալ հարաբերությունները հարաբերություններ են գույքի ու գույքատերերի նկատմամբ, այսինքն գույքային հարաբերություններ են:

Սխալ է գույքային հարաբերությունները նույնացնել դասակարգային հարաբերությունների հետ: Յերբ հասարակությունը բաժանված է դասակարգերի, այս դեպքում հակամարտ գույքային հարաբերությունները դասակարգային հարաբերությունների հիմք են կազմում: Սակայն ամեն գույքային հարաբերություն դասակարգային գույքային հարաբերություն չէ այն պարզ պատճառով, վոր կան հասարակություններ, վորոնք հակամարտ բնույթ չունեն, այսինքն դասակարգային կառուցվածք չունեն, սակայն անկասկած ունեն արտադրության միջոցների բաշխումից բղխող արտադրական հարաբերություններ – գույքային հարաբերություններ: Գույքային հարաբերությունները հատուկ են բոլոր հանրային-արտադրական ֆորմացիաներին, իսկ դասակարգային գույքային հարաբերությունները՝ միայն դասակարգային ֆորմացիաներին:



\* \*

Ամփոփելով տնտեսական զարգացման պարբերացման հիմունքի մասին մինչև այժմ ասածները՝ տեսնում ենք.

1. պարբերացման հիմունքը չպետք է փոփոխվի,
2. իբրև հիմունք պետք է ծառայի տնտեսության ելական հատկանիշը,
3. պարբերացման հիմունք չեն կարող լինել վոչ սպառումը, վոչ բաշխումը, վոչ փոխանակությունը, այլ միայն արտադրությունը,
4. արտադրության գործոններից պարբերացման հիմունք չեն կարող լինել վոչ արտադրության ճյուղերն ու վոչ ել արտադրության միջոցներն, այլ միայն արտադրական հարաբերությունները, և վերջապես
5. արտադրական հարաբերություններից ել պարբերացման հիմունք կարող են լինել միայն նրանք, վորոնք բղխում են արտադրության միջոցների բաշխումից, այսինքն գույքային հարաբերությունները:

## IX.

## ԹԵՈՐԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Պարբերացման հիմունքի խնդիրն սպառելուց հետո մնում է անցնել բուն պարբերացմանն, այսինքն տեսնել, թե Կարլ Մարքսը գույքային հարաբերություններին հենվելով տնտեսական զարգացումն ինչ շրջանների, փուլերի յե բաժանել, ուրիշ խոսքով՝ ինչ հանրային արտադրական ֆորմացիաներ է սահմանել:

Այս հարցման պատասխանը կստանանք միջնորդապես, Կարլ Մարքսի տնտեսական թեորիայի ձևավորման ետապներն ուրվագծելուց հետո:



Խնդիրն այն է, վոր տնտեսական զարգացման մարքսիստական թեորիան վերջնականապես ձևակերպած հանդես չէ յեկել մի անգամից: Կարլ Մարքսը տասնամյակների ընթացքում հետզհետե կատարելագործել է այս թեորիան՝ իբրև դիալեկտիկական մատերիալիստ հանդես գալու առաջին տարիներին մինչև յուր կյանքի վերջալույսը: Սակայն մարքսիստական գրականության մեջ դժբաղդաբար վոչ միայն տնտեսական զարգացման մարքսիստական թեորիայի շարադրանքը (изложение) չկա, այլ և դժվար է մատնանշել մի թուղթիկ ուրվագիծ անգամ այն մասին, թե զարգացման ինչ աստիճաններով է անցել այս թեորիան: <sup>1)</sup> Այս ու հաջորդ գլուխները, վորոնք անդրանիկ փորձն են այս ուղղությամբ, աղբյուրների պակասության պատճառով կարող են ինչ-ինչ ուղղումների պետք ունենալ մանրամասնությունների սահմաններում, սակայն հիմնականում, այն է՝ Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիայի ետապները գծելու տեսակետից, թվում է, թե նրանք զուրկ չեն կռվաններից:

Մեր կարծիքով Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան ունեցել է ձևավորման յերեք ետապ.

առաջին—1840-ական թվականների կեսերից մինչև 50-ական թվականների սկիզբը,

յերկրորդ—1850-ական թվականների սկզբից մինչև 70-ական թվականների վերջին տարիներն ու

յերրորդ—1870-ական թվականների վերջին տարիներից մինչև 1883 թ., Կարլ Մարքսի մահվան թվականը:

Այս յերեք ետապների ժամանակ էլ մարքսիզմի հիմնադիրն անշեղ հետևում է տնտեսական զարգացման պար-

<sup>1)</sup> Մարքսիզմի տարբեր մասերի զարգացման ուրվագծեր առհասարակ պակասում են: Վերջերս ապրանքային ֆեոդալիզմի թեորիայի զարգացման նվիրած մի ուրվագիծ տվել է Ի. Ռուբինը: Տեսեք И. И. Рубин. „Очерки по теории стоимости Маркса“, Москва, էջ 43—48:



բերացման մեկ հիմունք կիրառելու սկզբունքին՝ հենակետ  
ընդունելով արտադրական-գույքային հարաբերություննե-  
րը և հետզհետե լրացնում է հանրային-արտադրական ֆոր-  
մացիաների թիվը միայն:

Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորայի ա-  
ռաջին ձևավորման մասին մեզ գաղափար տալիս են նրա  
«Փիլիսոփայության աղքատությունը», վոր գրված է 1846-7  
ձմռանը, «Կոմմունիստական մանիֆեստը», վոր գրված է  
1847-8 ձմռանը (նոյեմբերից-փետրվար) և «Վարձու աշ-  
խատանք ու կապիտալը», վոր իբրև դասախոսություններ  
մի շարք կարդացված է Բրյուսսելում 1847 թվականին:

Այս յերեք յերկերն ակնհայտ ցույց են տալիս, վոր  
Մարքսն այս շրջանում գաղափար ունի հանրային-արտա-  
դրական շարս ֆորմացիայի մասին միայն, այն է՝ անտիկ,  
ֆեոդալական, բուրժուական ու սոցիալիստական:

Այս յերեք յերկի մեջ անուն-անուն հիշատակվում են  
ֆեոդալական, բուրժուական կամ կապիտալիստական ու  
սոցիալիստական կամ կոմմունիստական հասարակություն-  
ներն ու տնտեսությունները: Այնուհետև սկսվում է նրանց  
փոքրիկ տարբերությունը: «Փիլիսոփայության աղքատու-  
թյունն» ու «Կոմմունիստական մանիֆեստը» հիշատակում  
և թվում են անտիկ, այսինքն հնագույն հուն-հռոմեա-  
կան տնտեսության յերևույթներ ու հանրային խմբեր, ուս-  
կայն տնտեսության անունը չեն տալիս: Միայն «Վարձու  
աշխատանք ու կապիտալը» մեջ է, վոր հնագույն ստոր-  
կատիրական ֆորմացիան կրում է տերմինաբանական նը-  
շանակություն ունեցող «անտիկ» կոչումը:

Տնտեսական զարգացման թեորիայի առաջին ձևավոր-  
ման միջոցին Մարքսը ճանաչում է յերեք դասակարգային  
տնտեսություն (անտիկ, ֆեոդալական, բուրժուական) ու  
մեկ անդասակարգ տնտեսություն (սոցիալիստական-կոմ-  
մունիստական): Նա կարծում է, վոր սլատմության ըն-  
թացքում անդասակարգ հասարակություն չե յեղել, այլ



պիտի լինի, ուստի և «Կոմմունիստական մանիֆեստի» սկզբում գրում է.

«Ամբողջ նախընթաց հասարակության պատմությունը դասակարգերի կռվի պատմություն է»:

Նույն շրջանում Մարքսը կարծում է, վոր, բացի վերոհիշյալ յերեք դասակարգային հասարակություններից, ուրիշ դասակարգային հանրային—արտադրական ֆորմացիա գոյություն չէ ունեցել, ուստի և «Վարձու աշխատանք ու կապիտալի» մեջ այս ֆորմացիաները թվելով ասում էր.

«Անսիկ հասարակությունը, ճեղքալական հասարակությունը, բուրժուական հասարակությունն արտադրական հարաբերությունների ամբողջություններ են, վորոնցից յուրաքանչյուրը միևնույն ժամանակ ցույց է տալիս մարդկության պատմական զարգացման մի վորոշ աստիճան:»<sup>1)</sup>

Թեորիայի ձևավորման այս առաջին շրջանում տնտեսական զարգացման մարքսիստական թեորիայի մեծագույն մասն արդեն կերտված էր: Սակայն, թեորիան դեռ թերի յեր, և Մարքսն այս ասպարիզում նորանոր նվաճումներ եր անելու:

## X.

### ԹԵՈՐԻԱՅԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Տնտեսական զարգացման թեորիայի հետագա կատարելագործման փորձի առաջին ակնարկների հանդիպում ենք Մարքսի՝ 1853 թվականին Ենգելսին գրած նամակներում:

Այս թվականի հունիսի 1-ին Ենգելսին ուղղած մի նամակում մեծ գովասանքով խոսելով Ֆրանսուա Բերնիեյի «Մեծ Մոդուլի տիրապետությունների նկարագրությունը պարունակող ճանապարհորդություն-

<sup>1)</sup> «Վարձու աշխատանք ու կապիտալ», էջ 29:



ներ» վերնագրով գրքի մասին՝ Մարքսը գրում էր արդեն.

«Արևելքի բոլոր կարգերի հիմքը (Բերնիյեն, — գրում է Մարքսը, — խոսում է Տաճկաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի մասին) նա իրավամբ համարում է այն, վոր այնտեղ հողի մասնավոր սեփականությունն չկա: Ահա Արևելքի նույնիսկ յերկնքի բանալին:»<sup>1)</sup>

Նույն տարվա հունիսի 13-ին մի այլ նամակում Մարքսը նորից վերագառնում է նույն խնդրին՝ գրելով այս անգամ հատկապես Հնդկաստանի մասին.

«Ասիայի այս մասի լճացած, անշարժ բնույթը, քաղաքական մակերեսի բոլոր աննպատակ փոփոխությունների հակառակ, լիովին բացատրվում է փոխադարձաբար իրար նեցուկ հանդիսացող հետևյալ հանգամանքներով. 1) հանրային կառուցվածքները կենտրոնական կառավարություն գործն են, 2) սրան զուգընթաց, յեթե հաշվի չառնենք մի քանի խոշոր քաղաքներ, ամբողջ պետությունը տրոհվում է գյուղական համայնքների, վորոնք բոլորովին ինքնուրույն միավորներ են... Ինձ թվում է, վոր դժվար թե կարելի լինի ավելի լուրջ պատմական գտնել ասիական լճացած, անշարժ բնապետության համար:»<sup>2)</sup>

Այնուհետև քաղելով սրը Ստամբուլի Ռաֆֆլեսի «Ճավայի պատմություն» գրքից, վոր հետո ոգտագործելու յեր նաև «Կապիտալի» մեջ, Մարքսը գրում է.

«Յերկրի ամբողջ հողի բացարձակ սեփականատերն ինքնակալն է, գերագույն տիրապետը Ճավայում, վորտեղ հողից կարելի յե ստանալ բավական մեծ հողային ունեւտա»<sup>3)</sup>

Վոր Մարքսի հայացքը տնտեսական զարգացման շրջանների, հանրային-արտադրական ֆորմացիաների տե-

<sup>1)</sup> К. Маркс и Ф. Энгелс. „Письма“ пер. В. В. Адоратского. 2-е изд. Москва, 1923, № 65.

<sup>2)</sup> Ibid. № 180.

<sup>3)</sup> Ibid. № 181.



աւանդներ թվի մասին իրոք փոխվել են արդեն, այս բա-  
ցահայտ յերևան ե գալիս 1859 թվականին, յերբ նա գը-  
րում ե «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը»  
աշխատությունը՝ պատմական մատերիալիզմի հռչակավոր  
ձևակերպումը պարունակող հառաջաբանով: Տնտեսական  
դաբաղման թեորիայի ասպարիզում կատարած իր նոր ու-  
մեծ նվաճումը Մարքսն այսպես ե արտահայտում հիշյալ  
առաջաբանում:

«Հնդհանուր գծերով, իբրև հանրային-տնտեսական  
առաջադիմական դարաշրջաններ, կարելի յե մատնանշել  
ասիական, անտիկ, ֆեոդալական ու արդի բուրժուական  
արտադրության յեղանակները»: <sup>1)</sup>

«Քաղաքատնտեսության քննադատության» առաջա-  
բանում Մարքսը լուկ հիշում ե ասիական արտադրության  
յեղանակը, բայց սրա վորոշումը չե տալիս: Թեև 1853  
թվականներին գրած հատվածներում արդեն կա ասիական  
տնտեսության վորոշումը, սակայն տպագրված յերկերից  
առաջին անգամ «Կապիտալի» մեջ ե միայն բացատրվում  
հանրային-արտադրական այս ֆորմացիայի եյությունը:  
Ասիական տնտեսության յերևույթների համեմատաբար  
մանրամասն նկարագրություն գտնում ենք նախ «Կապի-  
տալի» I հատորում (4-րդ բաժին, 12-րդ գլուխ, 5-րդ  
դրվագ — «աշխատանքի բաժանումը մանուֆակտուրայի մեջ»  
ու աշխատանքի բաժանումը հասարակության մեջ»), վոր-  
տեղ բացի վերոհիշյալ Ստամֆորդ Ռաֆֆլեսից, Մարքսն  
ոգտվում ե նաև Marks Wilks-ի ու George Campbell-ի գրքե-  
րից: Այստեղ Մարքսը բնութագրում ե արևելքի, հատկա-  
պես Հնդկաստանի՝ գյուղական համայնքն, իբրև համարյա  
ինքնաբավ (самодовлеющий) միավոր, սրա համայնա-  
կան հողատիրությունն ու համայնական արտադրությու-  
նը, թվում ե համայնքի պաշտոնատարներին. մատնանը-

<sup>1)</sup> „Zur Kritik“, էջ LVI, „К критике“, էջ 38:



շում ե այս համայնքների կենսունակությունն ու նույնությամբ վերականգնելու ապշելի ունակությունը՝ վերջինս հակադրելով քաղաքական փոթորիկների արագապտույտ հերթափոխությանը, վորը սակայն չե շոշափում համայնքների տնտեսական հիմքերը:

„Արտադրական մեխանիզմի պարզությունն այս ինքնաբավ համայնքների, վորոնք շարունակ վերարտադրվում են միևնույն ձևով և կործանվելու դեպքում նորից ծնունդ են առնում միևնույն տեղում ու միևնույն անունով, լուծում ե գաղտնիքն ասիական հասարակությունների անփոփոխության, վոր սուր հակադրություն ե կազմում ասիական պետությունների՝ մշտապես կործանվելու ու նորից գոյանալու, այլ և սրանց իշխող հարստությունների արագորեն իրար հաջորդելու նկատմամբ: Քաղաքական ամպրոպների փոթորիկները չեն շոշափում այս հասարակության տնտեսական հիմնական տարրերի կառուցվածքը“<sup>1)</sup>

„Կապիտալի“ առաջին հատորում Մարքսը տալիս ե ասիական տնտեսության մեկ բնորոշ գծի, այն ե՝ հողային համայնքի նկարագրությունը: Իսկ նույն աշխատության յերրորդ հատորի յերկրորդ գրքում վորոշակի շեշտում ե նույն ֆորմացիայի յերկրորդ բնորոշ գծի մասին, այն ե՝ հողի պետականացման մասին («Կապիտալ», III<sup>2</sup>, 6-րդ բաժին, 48-րդ գլխի, II ու III գրվագ— „աշխատավճար ռենտա“ ու „արդյունավճար ռենտա“:

„Յեթե,—առում ե Մարքսը,— ինչպես այս նկատվում ե Ասիայում, վոչ թե մասնավոր հողատերերն, այլ ինքը պետությունն ե անմիջաբար կանգնում գյուղական արտադրողների հանդեպ, իբրև հողատեր ու միաժամանակ իբրև սուվերեն, այն ժամանակ ռենտան ու հարկը նույնանում են, կամ ավելի ճիշտ, այն ժամանակ գոյություն չե ունենում մի հարկ, վոր տարբեր լիներ հողային ռեն-

<sup>1)</sup> „Das kapital“, B. I, էջ 323, „Капитал“, т. I, էջ 322—324.



տայի այս ձևից: Այսպիսի պարագաներում հնարավոր է, վոր կախման հարաբերությունը տնտեսապես ու քաղաքականապես ավելի դաժան ձև չունենա, քան այն, վոր բնորոշում է բոլոր հպատակների դրությունն այս պետության հանդեպ: Այստեղ պետությունը հողի գերագույն սեփականատերն է: Այստեղ սուվերենիտետը հողային սեփականությունն է, վոր համակենտրոնացած է ազգային մասշտաբով: Սրա փոխարեն, այս դեպքում չկա վոչ մի մասնավոր հողային սեփականություն, թեև գոյություն ունի հողի ինչպես մասնավոր, այնպես և միատեղ տիրապետություն ու ոգտագործումն<sup>1)</sup>

Այսպիսով հանրային-արտադրական այս նոր ֆորմացիայի—ասիականի եյությունը կազմում է այն, վոր արտադրության միջոցներից ամենագլխավորը—հողը պատկանում է պետությանն, այսինքն իշխող դասակարգի գերագույն պետին, իսկ մնացած միջոցները պատկանում են անմիջական արտադրողներին, վորոնց հանրային-արտադրական կազմակերպությունը հողային համայնքն է: Ասիական տնտեսության ժամանակ անմիջական արտադրողը ազատ համայնիկն է (համայնքի անդամ, общинник) ազատ շինականը:<sup>2)</sup>

<sup>1)</sup> „Капитал“, III, Москва, 1908, էջ 319:

<sup>2)</sup> «Քաղաքատնտեսության քննադատության ներածության», «Կապիտալի» հատորների ու «Հավելյալ արժեքի թեորիաների» գրքերում շատ անգամ են պատահում սոսկ հիշատակություններ կամ թուցիկ դիտողություններ ասիական տնտեսության մասին, վոր մենք առանձին հիշել ավելորդ ենք համարում: Հողային համայնքին ու ասիական տնտեսությանը վերաբերող հատվածներ կան նաև Մարքսի՝ ռուսական համայնքի մասին Վերա Զասուլիչին գրած նամակների մեջ, վորոնք տպված են „Архив К. Маркса и Ф. Энгельса“ кн. I, էջ 270—286:



թուլցիկ հիշատակությամբ, վորոնք խոսում են ասիական տնտեսության գաղափարի ոգտին:

„Ընտանիքի, սեփականության ու պետության ծագումը“ աշխատության մեջ Ենգելսն այսպես է արտահայտում յուր կարծիքը դասակարգային ֆորմացիաների մասին.

„Ստրկությունը շահագործման առաջին ձևն էր, վոր հատուկ էր անտիկ հասարակությանը: Սրան հաջորդում է միջնադարյան ճորտությունն ու հետո աշխատանքի վարձումը: Ծառայագրության այս յերեք ձևերը բաղաբաղրության յերեք մեծ դարաշրջանների բնորոշ հատկանիշներն են:“<sup>1)</sup>

Ենգելսն այստեղ պաշտպանում է հանրային-արտագրական ֆորմացիաների մասին այն հայացքը, վոր Մարքսըն արտահայտել է „Վարձու աշխատանք ու կապիտալի“ մեջ:

Այսու հանդերձ ուշագրավ է, որինակ, այն, վոր Մարքսի ընկերը, յերբ նկարագրում է աթենական պետության ծագումը, հիշատակում է, թե նախնադարյան կոմունիստական հասարակարգի ու ստրկատիրության արանքում յեղել է հանրային հարաբերությունների մի վիճակ, վորի ժամանակ գոյություն են ունեցել յերեք դասակարգ միայն—յեվպատրիզներ կամ ազնվականներ, զեորգոսներ կամ հողագործներ ու դեմիուրգներ կամ արհեստավորներ, վորոնցից առաջինը կառավարող շերտն էր, իսկ վերջին յերկուսն—ազատ արտադրողները—կազմում էին ժողովուրդը:<sup>2)</sup>

<sup>1)</sup> Ф. Энгельс. „Происхождение семьи, собственности и государства“, пер. под ред. М. П. Иолшина, СПб, № 150—151:

<sup>2)</sup> Ibid, № 91—92: Ենգելսի վերաբերմունքի մասին ավելի վորոշ բան ասելու հնարավորություն տան թերևս այն նոր նյութերը, վորոնք վերաբերում են հնդկական ու գերմանական համայնքներին և գրված են Մարքսի ու Ենգելսի ձեռքով: Այս նյութերի հայտնագործության մասին հայտնում և հրատարակել է խոստանում Դ. Ռյադանովը: Տեսեք „Архив Маркса—Энгельса“, 1, № 268:



## XI.

ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ ՄԱՐԲՍԻՍՏԱԿԱՆ ԿԼԱՍՍԻԿ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ասիական տնտեսութեան, իբրև առանձնահատուկ հան-  
րային-արտադրական ֆորմացիայի, գաղափարին մի տա-  
րորինակ ու բացառիկ ճակատագիր եր վիճակված մարք-  
սիստական գրականութեան մեջ:

Զնայած այն հանգամանքին, վոր Մարքսի յերկերում  
թեև վոչ սիստեմատիկ շարադրված, այնուամենայնիվ  
բավական տվյալներ կային համոզվելու համար, վոր ասի-  
ական տնտեսութեանը մի ջուկ փուլ է տնտեսական զար-  
գացման ընթացքում, չնայած վոր հարյուրավոր ու հազա-  
րավոր գրքերում բարձրաձայն հնչում է գովքը պատմա-  
կան մատերիալիզմի հռչակավոր ձևակերպման մասին, վոր  
տպված է „Քաբաքատնտեսութեան քննադատութեան“ ա-  
ռաջաբանում, չնայած, վոր, մինչև այժմ վոչ վոք հանդես  
չի յեկել քննադատելու հիշյալ առաջաբանն այն իմաս-  
տով, վորպեսզի վտարեն այնտեղից ասիական տնտեսու-  
թեան վերաբերող բառերն, իբրև պատմական իրականու-  
թեան չհամապատասխանող թեզիս, - այնուամենայնիվ  
միահամուռ ջատագովութեան ու հիախառն ակնածութեան  
այս միջավայրում շարունակվում է ասիական տնտեսու-  
թեան գաղափարի դեմ բոյկոտը հենց մարքսիստների կողմից:

Թեև մի շատ շահեկան նյութ է, սակայն հնարավո-  
րութեան չունենք հանգամանորեն խոսելու այն խնդրի  
մասին, թե ինչ արձագանգ է գտել մարքսիստական կլաս-  
սիկ գրականութեան մեջ ասիական տնտեսութեան գա-  
ղափարը: Սակայն անհրաժեշտ ենք համարում մատնանշել,  
վոր Ենգելսի, Պլեխանովի, Լենինի ու Ռոզա Լյուքսեմ-  
բուրգի յերկերում կան կարծիքներ ու մտքեր, թեկուզ



Ենդելսը սրանով մասամբ հաստատում է Մարքսի այն միտքը, թե վոչ թե յերեք դասակարգային արտադրական ֆորմացիա յե յեղել, այլ չորս:

Պլեխանովն ասիական տնտեսության կամ, ինչպես ինքն է ասում քաղաքական տերմին դործածելով, արևելյան դեսպոտիաների մասին կարծիք է հայտնել այն վիճաբանությունների ժամանակ, վորոնք տեղի եյին ունենում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատ բանվորական կուսակցության V համագումարում (Ստոկհոլմում, 1896 թ. ապրիլին) հողային խնդրի շուրջը: Նույն կարծիքը նա տպագրված հայտնել է յուր „Дневник социал-демократа“ սերիայի № 5-ում: Պլեխանովը հետագայում յուր այս տեսակետը դարձրեց „Ռուս հասարակական մտքի զարգացման պատմության“ ներածության հիմնաքարերից մեկը:

„Մեր հռչակավոր գյուղական համայնքը, — գրում էր Պլեխանովը XVII—XVIII դարերի Ռուսաստանի տնտեսակարգի մասին, — հողի վերաբաժանություններով հանդերձ ցույց էր տալիս վոչ թե այն, վոր հողը պատկանում է գյուղացիների հասարակությանն, այլ այն, վոր թե հողն ու թե գյուղացիք կազմում են պետության կամ կալվածատիրոջ սեփականությունը... Ճորտատիրության լիակատար հաղթանակն էր այս, վոր գոյություն ունեւ պետության ու սրա բանվորական ույժի միջև: ...Ռուս գյուղացու անազատ կենցաղը, ինչպես ջրի յերկու կաթիլ, նմանվեց արևելյան մեծ դեսպոտիաների հողագործի կենցաղին: ...Արտադրողն այստեղ (Արևելքում. թ. Ա) պետության սեփականությունն է, նրա արտադրության խոսուն գործիքը...“<sup>1)</sup>

Պլեխանովի այս վորոշմանը համաձայնել չի կարելի, վորովհետև ասիական տնտեսությունն ու ճորտատիրու-

<sup>1)</sup> Г. В. Плеханов. „История русской общественной мысли“. Том I, изд. т-ва „Мир“, СПб, 1914, 62 69—72.



Թյունն անհարիր յերևույթներ են: <sup>1)</sup> Սակայն մեր նյութի տեսակետից այս կետը յերկրորդական է: Կարևորն այն է, վոր ուսմ մարքսիզմի հիմնադիրն ընդունում է, վոր արևելյան դեպոտիայում կամ ասիական տնտեսության ժամանակ գոյություն ունի հողի պետականացում:

Վերջին տեսակետը պաշտպանում է նաև Լենինը: «Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի հողային ծրագիրը» հողավածում, վոր գրված է 1902 թվին, նա ասում է, վոր ինքը հակված է կարծելու, թե Ռուսաստանի վերջին դարերի տնտեսակարգը ֆեոդալական է: <sup>2)</sup>

Ուստի և „Հողային խնդիրը Ստոկհոլմի համագումարում“ հողավածի մեջ բանակոսվելով Պլեխանովի դեմ՝ գրում է.

<sup>1)</sup> Բ. հրատ. ծանոթ. — Ավելի զգուշ ու համեմատաբար ավելի ճիշտ է նաև Ռուսաստանի նկատմամբ այն ձևակերպումը, վոր տվել է Վերա Զասուլիչը Պլեխանովի հիշյալ աշխատություններից առաջ, 1894 թվականի դեկտեմբերի 14-ին Պլեխանովին գրած նամակներից մեկում: «Կապիտալի» III հատորի հրատարակությունից հաղիվ յերկու ամիս անց խոսելով «Կապիտալի» այս հատորի 47-րդ գլխի յերկրորդ գրվագի մասին, վոր նվիրված է աշխատավճար ունեցողին, Զասուլիչը գրում էր. «Այս գլխից բլդխում է, վոր յերբ (պատմության մեջ en grand) արտադրության միջոցները պատկանում են արտադրողին, ապա նրանից հավելյալ արժեք ստանալու պայմանն այն է, վոր նա, արտադրողն ինքն ավելի կամ պակաս չափով անազատ է լինում, պատկանում է մեկն ու մեկին, — յերբեմն պետությանն (արևելքում ու մեզ անում), յերբեմն ֆեոդալներին»: „Группа „Освобождение“ труда“, под ред. Л. Г. Дейча, сборник № 4, Москва-Ленинград, 1926, էջ 285: Ընդգծումը մերն է: Ավելի կամ պակաս չափով «ազատ չլինելը» կարող է բավական հեռու լինել ճորտությունից, վորի ժամանակ անմիջական արտադրողն անձնապես լիովին անազատ է և բռնի ու ամուր շղթայված է հողից: Հմմտ. „Капитал“, III<sup>2</sup>, 319:

<sup>2)</sup> В. Ильин. „Из истории социал-демократической аграрной программы“ (Статьи 1901—1906 годов), Петроград, 1917, էջ 28:



„Մի բոլոր ընդունենք, վոր մոսկովյան Ռուսաստանում մինչև Պետրոս Մեծի շրջանը XVII դարում իրապես գոյություն ուներ հողի ազգայնացում: ...Վորչափով մոսկովյան Ռուսաստանում գոյություն ուներ (կամ՝ յեթե մոսկովյան Ռուսաստանում գոյություն ուներ) հողի ազգայնացում, այն չափով նրա տնտեսական հիմքը կազմում էր արտադրության ասիական յեղանակը:“<sup>1)</sup>

Պլեխանովի ու Լենինի ասածների հակառակ՝ Ռոզա Լյուքսեմբուրգը բացասում է ասիական պետություններում հողի պետականացման իրողությունը: Յեթե չենք սխալվում, մարքսիստական կլասսիկ գրականության մեջ նա առաջինն է, վոր պայքարում է այս գաղափարի դեմ:

„Յեվրոպական գաղութարանների (колонизатор) մտքի ծնունդ է այս սիրած կարծիքը, թե գաղութների ամբողջ հողը քաղաքական տիրապետի սեփականություն է:“<sup>2)</sup>

Այնուամենայնիվ Ռոզա Լյուքսեմբուրգը յերեք ֆորմացիաների—անտիկի, ֆեոդալականի ու բուրժուականի կողքին դնում է մի շորրորդը, վորի եյական հատկանիշ համարում է հողային համայնքը: Ըստ յերևույթին այս

<sup>1)</sup> Ibid. էջ 106:

<sup>2)</sup> Р. Люксембург. „Накопление капитала“, т. I и II, пер. Ш. Дволайцкого, 2 изд. Москва—Петроград, 1923, էջ 382: Պայքարելով այլոց դեմ, վորոնք պաշտպանել են հողի պետականացման փաստն արևելյան մեծ պետություններում, Ռոզա Լյուքսեմբուրգը սրանց կարգում չե հիշում Մարքսին: Յուր տեսակետը պաշտպանելիս Լյուքսեմբուրգն ի միջի այլոց հիմնվում է նաև անգլիացի սոցիոլոգ-իրավագետ Հենրի Սոմներ Մենի ասածների վրա: Ափսոս, վոր «Կապիտալի կուտակման» հեղինակին հայտնի չե (և հրատարակված չլինելու պատճառով չեր ել կարող հայտնի լինել) «Կապիտալի» հեղինակի կարծիքը Մենի մասին, վորին Մարքսը դասում է բուրժուական այն գիտականների շարքը, վորոնք կանգ չեն առնում նույն իսկ կեղծիքի առջև: (Հմմտ. „Архив Маркса и Энгельса“, кн. I, էջ 278):



չորրորդ ֆորմացիան նրա կարծիքով ներդաշնակ և վոչ թե հակամարտ բնույթ ունի: Համենայն դեպս, նա մի քանի անգամ շեշտում է նրա տնտեսական զարգացման առանձին փուլ լինելու հանգամանքը՝ այն անվանելով «հողային կոմմունիստական համայնք», «նախնադարյան կոմմունիստական գյուղական համայնք», «ազրարային կոմմունիստական գյուղական համայնք», «կոմմունիստական գյուղական համայնք»:<sup>1)</sup>

Վերոհիշյալ համառոտ հատվածները — ենգելսինն՝ աթենական հանրային հարաբերությունների մի հատուկ շրջանի մասին, Պլեխանովինն ու Լենինինը՝ հողի պետականացման կամ ազգայնացման վերաբերյալ ու Լյուքսեմբուրգինը՝ հողային համայնքի նկատմամբ — տարբեր կողմերից հաստատում են, վոր Մարքսի ասածն ասիական տնտեսության մասին, իբրև ջոկ հանրային-արտադրական ֆորմացիայի մասին, խախտում ու մտացածին գաղափար չէ, այլ իրական ու պատմական պատվանդանի վրա յե հոյակերտված:<sup>2)</sup>

1) Р. Люксембург. „Накопление капитала“, Էջ 16, 19, 20, 53 և այլն:

2) Բ. հրատ. ծանոթ. — Հրապարակ հանելով Մարքսի թեորիայի մեջ ասիական տնտեսության՝ առանձին հանրային — տնտեսական ֆորմացիա լինելու խնդիրն՝ անհրաժեշտ ենք համարում ասել նաև հետևյալը: Ասիական տնտեսության հատկանիշների խնդիրը վերջնականապես սպառված հարց չէ կարելի համարել: Յերկու հատկանիշ — հողի՝ պետությանը կամ սուվերենին պատկանելն ու հողային համայնքի գոյությունը — մատնանշել և շեշտել և Մարքսը: Սակայն կան պատմական շրջաններ, յերբ հողը պետությանը կամ սուվերինինը չէ և վոչ ել համայնացված է, այլ ազատ շինականի մասնավոր սեփականություն է: «Գյուղացիների՝ սեփական տնտեսության հետ զուգորդված ազատ հողաձեռքային (парцеллярный) սեփականությունն, իբրև տիրապետող նորմալ ձև... կազմում է դասական հնության լավագույն ժամանակների հասարակության տնտեսական հիմքը», — ասում է ինքը



## XII.

## ԹԵՈՐԵՄԱՅԻ ՅԵՐՐՈՐԴ ՈՒ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Կարլ Մարքսի տնտեսական զարգացման յերրորդ, վերջին ու վերջնական ձևավորումը կատարվում է 1877 թվականից հետո:

Ի՞նչ թվական է այս:

Այն տարում ամերիկացի հայտնի սոցիոլոգ Հենրի Լյուիս Մորգանը (1818—1881) հրատարակում է յուր հոշակավոր աշխատությունը „Հնագարյան հասարակություն“ անունով, վորի մեջ հեղինակը մի կարգ հայտնագործություններ է անում հնագույն մշակույթի, ազգակցության սիստեմների ու ընտանիքի ձևերի, տոհմի կազմակերպության, նախնագարյան կոմմունիզմի վերաբերյալ, վորոնք բանալի յեն հանդիսանում մարդկության պատմության մի շարք գաղտնիքները լուծելու համար: Ենգելսի կարծիքով „Մորգանի հայտնագործությունը մինչպատմական շրջանն ուսումնասիրող գիտության համար

Մարքսը („Капитал“, III<sup>2</sup>, էջ 335): Արդ, տնտեսական զարգացման այս աստիճանը, վորտեղ հողը գյուղացու սեփականություն է, և ազատ գյուղացիների տնտեսությունը կազմում է հանրային տնտեսության մեջ գերակշռող տիպ, հանրային արտադրական վոր ֆորմացիայի տակ պետք է դասել: Անմիջական արտադրողն ստրուկ չէ, վոր տնտեսությունը համարենք անտիկ, ճորտ չէ, վոր ընդունենք ճորտատիրական, ազատավարձու բանվոր չէ, վոր ճանաչենք կապիտալիստական: Կարելի՞ յե արդյոք նման տնտեսակարգն ասիական համարել: Մենք հակված ենք դրական պատասխան տալու: Ըստ այսմ ասիական տնտեսության ամենագլխավոր հատկանիշը կլինի այն, վոր անմիջական արտադրողների գերակշռող տիպն ազատ գյուղացի է: Այս դեպքում ուրեմն, Հին Հնդկ կաստանի տնտեսակարգն ու Հին Հունաստանի դասական հնություն ժամանակների տնտեսակարգն, որինակ, կներկայանան վոչ թե իբրև հանրային—արտադրական տարրեր ֆորմացիաներ, այլ միևնույն ֆորմացիայի—ասիական տնտեսության—տարրեր աստիճաններ:



նույն նշանակութիւնն ունի, ինչ նշանակութիւն վոր ունի Դարվինի եվոլյուցիոն թեորիան կենսաբանության համար, իսկ Մարքսի հավելյալ արժեքի թեորիան քաղաքատնտեսության համար<sup>1)</sup> )

Նախնադարյան կուլտուրայի հիմնական խնդիրներն են տոհմի ու սեփականության խնդիրները:

Սրանցից առաջինի, այն է տոհմի գաղափարը չէր բացակայում գիտության մեջ, սակայն նրա ելության, կազմակերպության ու զարգացման մասին այլ հասկացողութիւնն ունեւէին:

Դեռ 1859 թվականին „Քաղաքատնտեսության քննադատության“ մեջ Մարքսը՝ հերքելով Արիստոտելի կարծիքը մասնավոր ընտանիքի, իբրեւ սկզբնական հանրային միավորի մասին, նկատում էր.

„Սակայն ընտանիքի սկզբնական ձևն իսկապէս տոհմ-

ճիշտ այնպէս, ինչպէս նահապետական ստրկութիւնն ու արդյունաբերական ստրկատիրութիւնը վոչ թէ տարբեր տնտեսակարգեր են, այլ միևնույն ֆորմացիայի—անտիկ տնտեսության—տարբեր աստիճանները, և կամ ինչպէս մանուֆակտուրային կապիտալիզմը, գործարանային կապիտալիզմն ու տրեստային կապիտալիզմը՝ կապիտալիստական տնտեսակարգի տալքեր ու հաջորդական աստիճաններ ենք նկատում: Այս լրացումը մենք անում ենք թեյաբար: Խնդրի բազմակողմանի պարզարանութիւնը խիստ անհրաժեշտ է, քանի վոր վերջնական պատասխանը նոր լուսով կցուացնէ շատ յերկիրների տնտեսական զարգացման վորոշ շրջաններ:

Մասնավորելով խոսքը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության մասին՝ պետք է ասենք, վոր, այսպէս թէ այնպէս, մեր խորին համոզումով ասիական տնտեսության գաղափարն այս ասպարեզում անգնահատելի ծառայութիւններ կարող է մատուցանել և պիտի մատուցէ մեր ուսումնասիրողներին՝ սրանց զերծ պահելով ամենուրեք պարտադրարար ստրուկ կամ ճորտ տեսնելու «արդիական» նախապաշարումից:

<sup>1)</sup> Энгельс. „Происхождение“, էջ 12:



ընտանիքն է, վորից պատմական քայքայման հետևանքով ծագում է մասնավոր ընտանիքը:»<sup>1)</sup>

«Քաղաքատնտեսության քննադատության ներածության» մեջ խոսելով նույն խնդրի մասին՝ հեղինակը դիտում է, վոր արտադրող մարդն սկզբում հանդես է յեկել «ընտանիքի մեջ ու ծավալված, տոհմ դարձած ընտանիքի մեջ» („in der Familie und in der zum Stamme erweiterten Familie“.<sup>2)</sup>)

Տարիներ հետո՝ այլ առթիվ խոսելով ընտանիքի ու տոհմի հարաբերության մասին՝ Մարքսը գրում է «Կապիտալում».

«Ընտանիքի սահմաններում—իսկ հետագա զարգացման ժամանակ տոհմի սահմաններում—աշխատանքի բնական բաժանում առաջ է գալիս սեռի ու տարիքի տարբերությունների հետևանքով:»<sup>3)</sup>

Այս հատվածները ցույց են տալիս, վոր Մարքսը նախնական ընտանիքը չէր պատկերացնում այժմյան մասնավոր ընտանիքի ձևով, այլ իբրև խոշոր համակեցություն, նահապետական շատ բազմաճյուղ գերդաստանի ձևով, վորից, նրա կարծիքով, ծագում, առաջ եր գալիս տոհմը:<sup>4)</sup>

Մարքսի մահվանից հետո, «Կապիտալի» այն տողերի տակ, վոր հենց նոր քաղեցինք և վորոնք վերաբերում են ընտանիքին ու տոհմին, ենգելսը գրել է մի ծանոթություն, վորով վկայում է, թե հետագայում Մարքսի հայացքները փոփոխության են յենթարկվել: Փոխանակ ըն-

<sup>1)</sup> „Zur kritik“, էջ 30. „К критике“, էջ 62: Մարքսի ասած այս տոհմ-ընտանիքը խոշորագույն գերդաստանի իմաստով պիտի հասկանալ: Բնագրում գրված է „die Stammfamilie“, վոր ամենին семья—община չէ, ինչպես թարգմանում է ողեսերեն հրատարակությունը:

<sup>2)</sup> „Zur kritik“, էջ XIV, „К критике“, էջ 10.

<sup>3)</sup> „Das Kapital“ B. I, էջ 316, „Капитал“, т. I, էջ 316—317:

<sup>4)</sup> Հմմտ. „Архив К. Маркса и Ф. Энгельса“, книга первая, под редакцией Д. Рязанова, 1924, էջ 254:



դունելու, ինչպես առաջ եր կարծում, թե տոհմն առաջանում է ընտանիքից, Ենգելսի ընկերը յեկել է այն համոզման, վոր, ընդհակառակը, տոհմն է մարդկային համակեցության սկզբնական ձևը, վորից և ծագում է ընտանիքը: Մի այլ ծանոթության մեջ, վոր դարձյալ Մարքսի մահից հետո Ենգելսը դնում է „Կոմմունիստական Մանիֆեստի“ այն տողերի տակ, վորում ասված է, թե „ամբողջ նախընթաց հասարակության պատմությունը դասակարգերի կռվի պատմություն է“, Մարքսի ընկերը պատմում է այն մասին, թե ինչպես իրենց կարծիքները փոխել են նախնադարյան հասարակության համակեցության ձևերի նկատմամբ: Վերջին ծանոթությունն, ի միջի այլոց, հիշատակում է Մորգանի ազդեցության մասին:

Նախնադարյան մշակույթի յերկրորդ հիմնական խընդիրը, ինչպես ասացինք, սեփականության, այսինքն լույքային հարաբերությունների խնդիրն է:

Այն հարցմանը, թե հանրային-արտադրական ինչպիսի ֆորմացիա յե գոյություն ունեցել նախնադարյան շրջանում, հասարակագիտությունը Մորգանի ու Ենգելսի որերից մինչև այժմ պատասխանում է.

— Կոմմունիստական:

Իսկ ի՞նչ կարծիք ունենա այս մասին Մարքսը:

Մարքսիզմի հիմնադիրների գրական ժառանգությունների հետախույզ Դ. Ռյազանովի վերջերս հրատարակած „Գերման իդեոլոգիա“ աշխատությունը, վոր գրել են Մարքսն ու Ենգելսը, վկայում է, վոր սրանք 40-ական թվականների կեսերից արդեն չեն պաշտպանում այն հայացքը, թե „ի սկզբանե եր“ միայն մասնավոր սեփականությունը:

«Սեփականության առաջին ձևը, — գրում է յին Մարքսը ու Ենգելսը 1845 թվականին, — ինչպես հնադարյան աշխարհում, այնպես և միջին դարերում ցեղային, տոհմական սեփականությունն է, վորի ծագման պատճառը



հոռվմայեցիներին մեջ պատերազմն է, իսկ գերմանացոց մեջ՝ անասնապահությունը: Վորովհետև հին դարերում մի քաղաքում ապրում էին մի քանի տոհմեր, ապա տոհմային սեփականությունն այն ժամանակ պետական սեփականության բնույթ ուներ, իսկ առանձին անհատի սեփականության իրավունքը վեր է ածվում սոսկ տիրապետության (possessio) իրավունքի, վորը սակայն, ինչպես և տոհմային սեփականությունն ընդհանրապես, սահմանափակվում է հողային սեփականությամբ միայն: <sup>1)</sup>)

Սույն աշխատության վերջում, յերբ Մարքսն ու Ենգելսն ուրվագծում են սեփականության ձևերի զարգացումը, իբրև սեփականության անդրանիկ ձև կրկին տոհմային սեփականություն են դնում: <sup>2)</sup>)

Կասկած չկա, վոր թե տոհմի ու թե նախնադարյան հանրայնացրած (общественный) սեփականության զաղափարների սաղմեր կային Մարքսի (այլ և Ենգելսի) 40-ական ու 50-ական թվականների յերկերում ել: Սակայն այս սաղմերը բողբոջեցին և մտան Մարքսի տնտեսական զարգացման թեորիայի մեջ Մորգանի՝ դարագլուխ կազմող աշխատությունից հետո:

Ենգելսն «Ընտանիքի, սեփականության ու պետության ծագումը» գրքի առաջին հրատարակության առաջաբանում պատմում է, թե «Մարքսը մտադրություն ուներ շարադրելու Մորգանի հետազոտությունների արգասիքները»՝ վերջիններս կապակցելով պատմության մատերիալիստական ուսումնասիրության հետ և «այս միջոցով ցույց տալու նրանց վիթխարի նշանակությունը»: Մահը խանգարում է Մարքսին՝ կատարելու յուր բաղձանքը, այն է՝ մի աշխատության մեջ տալու նախնադարյան կոմմունիստական հասարակության արտադրության միջոց-

<sup>1)</sup> „Архив Маркса—Энгельса“, I, 251.

<sup>2)</sup> Ibid. էջ 254:



| Ֆորմա-<br>միջոց              | 1                                                                                 | 2                                                          | 3                                 | 4                               | 5                      |
|------------------------------|-----------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------|-----------------------------------|---------------------------------|------------------------|
| Տնտեսություն-<br>ների անունը | Ուշն եւ պատկանում<br>աւտադրութեան<br>միջոցները                                    | Ուժ եւ անմիջական<br>աւտադրողը                              | Գույքային հարա-<br>բերութիւնները  | Ինչպիսի՞ յե աւր-<br>տադրութիւնը | Տնտեսութեան<br>ընտելքը |
| I                            | Տոհմին                                                                            | Տոհմիկը (դեմո-<br>կրատական տոհմի<br>անդամը)                | Կոմմունիստական                    | Հանրայնացրած                    | Անդատակարգ             |
| II                           | Հողը՝ պետութեանը,<br>մյուսները՝ համայնքին<br>կամ համայնիկին (ա-<br>զատ շինականին) | Համայնքի անդա-<br>մը (համայնիկը)<br>կամ ազատ շինա-<br>կանը | Ասիական կամ<br>շինականատիրական    | Համայնական<br>կամ մանավոր       | Դատակարգային           |
| III                          | Ստրակատիրոջը (մի-<br>ջոցների մեջ եւ նաեւ<br>ստրուկը)                              | Ստրուկը                                                    | Անտիկ կամ<br>ստրկատիրական         | Մանավոր                         | Դատակարգային           |
| IV                           | Ժորտատիրոջը                                                                       | Ժորտը                                                      | Ֆեոդալական կամ<br>ճորտատիրական    | Մանավոր                         | Դատակարգային           |
| V                            | Կապիտալիստին                                                                      | Բանվորը                                                    | Բուրժուական կամ<br>բանվորատիրական | Մանավոր                         | Դատակարգային           |
| VI                           | Աշխարհածավալ սո-<br>ցիալիստական հասա-<br>րակութեանը                               | Ընկերը (սոցիալիս-<br>տական ասոցիա-<br>ցիայի անդամը)        | Սոցիալիստական                     | Հանրայնացրած                    | Անդատակարգ             |



ների, արտադրական հարաբերությունների ու համակե-  
ցության ձևերի պատկերը: Հիշյալ աշխատանքը բաժին է  
ընկնում նրա ընկերոջը, վորը կատարում է այն՝ տեղ-  
տեղ նույնիսկ շարադրելով Մարքսի բաներով:

Նախնադարյան կոմմունիստական տնտեսության մու-  
ծումով տնտեսական զարգացման մարքսիստական թեո-  
րիան ավարտում է յաւր ձևավորման պրոցեսը և ստանում  
յուր վերջնական կերպարանքը 2 անդամակարգ ու 4 դա-  
մակարգային ֆորմացիաներով:

Կ. Մարքսի տնտեսական զարգացման պարբերացումն  
ակնառու (НАГЛЯДНО) պատկերացնելու նպատակով՝ այն  
տալիս ենք աղյուսակի ձևով: Առաջին յերեք (1, 2, 3)  
ուղղահայաց սյունյակներից յուրաքանչյուրը բնորոշում է  
ավյալ ֆորմացիան և մյուս յերկու սյունյակի հատկա-  
նիշների այլ արտահայտությունն է միայն: (Տես աղյու-  
սակ, եջ 49):

\*  
\* \*  
\*

Ներկա հոգվածս նվիրված է տնտեսական զարգաց-  
ման թեորիայի յերկու մասերին—պարբերացման հիմուն-  
քին ու բուն պարբերացմանը: Բացի այս, այն պարունա-  
կում է տնտեսական զարգացման թեորիայի ձևավորման  
ետապններն ել: Բայց հարցն այսքանով չէ սպառվում:  
Մնում էր և պետք էր խոսել մի շարք այլ խնդիրների  
մասին ել, վորոնք վերաբերում են տնտեսական զարգաց-  
ման մարքսիստական պարբերացմանը և վորոնց լուսաբա-  
նությունն անհրաժեշտ է հիշյալ թեորիան վոչ-բնագան-  
ցորեն, այլ դիալեկտիկորեն ըմբռնելու համար: Սակայն տե-  
ղի սղությունը հարկադրում է առայժմ բավական համա-  
րելու վերոգրյալը:

1924 թ. դեկտեմբեր, Յերևան:



ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ՀԱՎԵԼՎԱԾ

ՎԵՐԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ







## Վ Ե Ր Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

(ՀԱՄԱԿՆԱՐԿ)

Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ գլխավոր վերապահությունները:

1) Յուրաքանչյուր տնտեսության մեջ գերիշխող գույքային հարաբերությունների կողքին շարունակում են հարատևել կամ ծնունդ առնել այլ գույքային հարաբերություններ ել: Վորևէ տնտեսական ֆորմացիա բնորոշվում է գերիշխող գույքային հարաբերություններով. մնացած գույքային հարաբերությունները չեն փոխում տնտեսության եյությունը: Կապիտալիստական հասարակության մեջ գերիշխում է ազատավարձու աշխատանքը: Սակայն Հին Ասորեստանում կամ Հին Հունաստանում նույնպես հանդիպում ենք ազատավարձու աշխատանքի մասնակի գեպքերի: Այս մասնակի գեպքերը Հին Ասորեստանը կամ Հին Հունաստանը չեն դարձնում կապիտալիստական յերկիրներ, ինչպես կարծում են Եգուարդ Մայերը, Պյոլմանը կամ ուրիշները: Յեվ ընդհակառակը. XIX դարի կապիտալիստական յերկիրներից շատերը գաղութներում գործադրում էին ստրկական աշխատանք. սրանով նրանք չէին դառնում ստրկատիրական յերկիր, փորովհետև այն կապիտալիստական յերկիրներում գերիշխում էր վոչ թե ստրկական, այլ ազատավարձու աշխատանքը, վոչ թե ստրկատիրական, այլ կապիտալիստական գույքային հարաբերությունները: Տիրապետող գույքային հարաբերությունների կողքին իբրև նորաբողբոջ գույքային հարաբերությունների նմուշ կարելի յե հիշատակել կապիտալիստական տնտեսության ներսում ծիլեր արձակող աշխատավորական արտադրական կոոպերացիան:



2) Բազմաթիվ յերկիրներ կարող են անցնել տնտեսության միևնույն շրջանով, սակայն այն յերկիրներից յուրաքանչյուրի մեջ հիշյալ տնտեսությունը՝ պահելով յուր հիմնական գծերը՝ յերևան ե հանում սեփական առանձնահատկություններ ել։ Այս առանձնահատկությունները բղխում են նրա ներքին ու միջազգային պայմաններից։ Կապիտալիստական յերկիրներ են թե Ամերիկան, թե Անգլիան և թե Գերմանիան ու Ֆրանսիան։ Սակայն վորովհետև սրանցից յուրաքանչյուրն այլ պայմանների մեջ ե գտնվում, ուստի Ամերիկայի ու Անգլիայի կապիտալիզմը յուր տեղական առանձնահատկություններով տարբերվում ե Ֆրանսիայի ու Գերմանիայի կապիտալիզմից։ Կարճ. հանրային-արտադրական ֆորմացիան յուր փոփոխակներն ունի տարածության մեջ։

3) Ինչպես ամեն մի պատմական յերևույթ, այնպես ել յուրաքանչյուր հանրային-տնտեսական ֆորմացիա ունենում ե յուր առաջ գալու, զարգացման ու անկման ժամանակները։ Տնտեսական փուլը վորոշ չափով տարբեր կերպարանքով ե հանդես յեկնում նոր գոյանալիս, զարգացման գագաթնակետին հասած միջոցին ու անկման որերում։ Գույքային հարաբերությունների տեսակետից նույնը մնալով՝ ֆորմացիան անցնում ե յուր զարգացման տարբեր աստիճաններով։ Կապիտալիզմը տնտեսական զարգացման առանձին փուլ ե, սակայն այս չե խանգարում, վոր տնտեսագետները տարբերեն կապիտալիզմի յերեք դարաշրջաններ, վորոնցից առաջնում հանդես ե գալիս առևտրական կապիտալը, յերկրորդում՝ արդյունաբերական կապիտալն ու յերրորդում՝ ֆինանսական կապիտալը։<sup>1)</sup> Ուրիշ խոսքով՝ հանրային-տնտեսական ֆորմացիան ունի յուր վարիանտները ժամանակի մեջ։

<sup>1)</sup> Կապիտալիզմի աստիճանները վորոշելիս ավելի հետևողական կլինենք, յեթե հիմք ընդունենք դարձյալ արտադրական հատկանիշը և ըստ այսմ իրարուց տարբերենք ա) մա-



4) Մարքսի թեորիան գերծե տնտեսության անընդհատ ու անպայման առաջադիմություն դավանելու նախապաշարումից, ուստի և ընդունում է, վոր մի շարք հանգամանքների շնորհիվ տնտեսությունը կարող է վորոշ չափով փոփոխել յուր զարգացման ընթացքը. առաջադիմական պրոցեսսին կարող է հաջորդել տնտեսության հետընթաց շարժումը: Դեռ ևս «Կոմմունիստական Մանիֆեստի» մեջ՝ նկարագրելով դասակարգային կռիվի ընթացքը՝ Մարքսն ու Ենգելսը շեշտում են, վոր այս կռիվը վերջանում է «կամ հասարակության հեղափոխական վերակազմությամբ ու կամ կռվող դասակարգերի միասնական կործանումով»: Յերբ դասակարգային կռիվը յերկրորդ վախճանն է ունենում, անկասկած՝ սրան զուգընթաց տեղի յե ունենում տնտեսության փլուզում էլ:

5) Կարող է պատահել նույն իսկ, վոր մի շարք ներքին ու միջազգային հանգամանքների շնորհիվ մի յերկրի տնտեսական զարգացումն ընթանա կեռմաններով (ՅՈՒՅՈՒՅ) կամ նույն իսկ կրկնություններով: Որինակ, ասենք, կարող է լինել նախ՝ ճորտություն, ապա ազատ շինականություն, հետո նորից ճորտություն և վերջը դարձյալ ազատ գյուղացություն և այլն: Ենգելսի վկայությամբ Գերմանիան միջին դարերից մինչև 19-րդ դարը գնացել է տնտեսական զարգացման այսպիսի վոլորապտույտ ճանապարհով:

6) Մարդկությունն իբրև ամբողջություն անցել է, անցնում է և պետք է անցնի տնտեսական զարգացման հիշյալ վեց շրջանով՝ նախնադարյան կոմմունիստական տնտեսությունից սկսած մինչև սոցիալիստական տնտեսությունը: Սակայն ամեն մի առանձին յերկրի ու ժողովրդի համար ճակատագրորեն պարտադիր չե ֆորմացիաների այն կանոնավոր հաջորդականության կարգը, վոր

նուֆակտորային կապիտալիզմի՝ բ) գործարանային կապիտալիզմի ու գ) տրեստային կապիտալիզմի դարաշրջանները:



մեր առաջ պատկերանում ե թղթի վրա: Այսպես, մարդկության վորոշ հատվածներ անհիշելի ժամանակներից մինչև որս ել պահպանել են իրենց նախնադարյան կոմմունիստական տնտեսակարգը և անժանոթ մնացել տնտեսական զարգացման մնացած փուլերին (այսպես կոչված «վայրենի» ժողովուրդներից ոմանք): Մի քանի հին ազգեր դարեր ու դարեր շարունակ ապրել են՝ ունենալով ասիական տնտեսություն և այժմ նոր նոր են սկսում վտաք դնել կապիտալիստական զարգացման ուղին (Չինաստան, Հնդկաստան, Պարսկաստան և այլն): Սրանց կողքին տեսնում ենք ուրիշ յերկիրներ ու ժողովուրդներ ել, վերոնք արդեն ավարտել են հակամարտ, դասակարգային տնտեսությունների ամբողջ շղթան և թևակոխում են սոցիալիստական տնտեսություն կազմակերպելու շրջանը: Միայն Յեվրոպայի ռնտոգենիան ե մարդկության ֆիլոգենիայի ճշգրիտ հայելին:

7) Ինչպես վոր առաջադեմ յերկիրների տեխնիկական նվաճումները, վորոնք ձեռք են բերվում յերկարատև ու տաժանելի ճգնությամբ, համեմատաբար դյուրացնում են հետամնաց յերկիրների տեխնիկայի զարգացումն, այնպես ել առաջադեմ ժողովուրդների սոցիալ-տրնտեսական նվաճումներն ընդհանրապես մեծ զարկ են տալիս հետամնացների սոցիալ-տնտեսական զարգացմանը: Համաշխարհային տնտեսության ծավալումը կրճատում ե հետամնաց ժողովուրդների զարգացման ուղին: Մեծանում ե հանրային-տնտեսական այս կամ այն ֆորմացիան կամ ֆորմացիաները մեջ տալու կամ նրանց վրայից վոստնելով սոցիալիստական տնտեսության հասնելու հնարավորությունը: Հետամնաց ժողովուրդների ու յերկիրների տնտեսական թռիչքների մեծությունը կախված կլինի այն թափից, վորով կծավալվեն տրեստային կապիտալիզմը խորտակող բանվորական հեղափոխությունն ու արտադ-



ըության միջոցների վիթխարի համակենտրոնացման վրա հիմնված սոցիալիստական տնտեսությունը:

Այսպիսով, վորպեսզի ընթերցողն ու հետազոտողը կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան բազմակողմանի ըմբռնել ու նրանով առաջնորդվել կարողանան, նրանք պետք է վոչ միայն ծանոթ լինեն տնտեսական զարգացման այն պարբերացմանը, վոր տվել է «կապիտալի» հեղինակն, այլ և միշտ ուշադրության առնեն

- 1) Տիրապետող գույքային հարաբերությունները,
- 2) Հանրային-տնտեսական ֆորմացիայի փոփոխակաները (վարիացիաները),
- 3) Ֆորմացիայի աստիճանավորումները (գրադացիաները),
- 4) Տնտեսության վոչ միայն առաջընթաց, այլ և հետընթաց շարժումը,
- 5) Տնտեսական զարգացման կեումանների ու կրկնությունների կարելությունը,
- 6) Մարդկության իբրև ամբողջության տնտեսական զարգացման (ֆիլոգենիա) ու առանձին յերկրի կամ ժողովրդի տնտեսական զարգացման (ոնտոգենիա) հնարավոր տարբերությունն ու
- 7) Մեջ տվող թռիչքների հավանականության պայմանները:

Այս վերապահությունները, վոր այժմ առաջադրում ենք համակնարկի ((կոնսպեկտի) ձևով, կարող են հիմնավորվել ավելի մանրամասն: Հույս ունենք, վոր այս նյութին կվերադառնանք մի լրացուցիչ աշխատությամբ:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՁ

|                                                                      |    |
|----------------------------------------------------------------------|----|
| I. Տնտեսական զարգացման թեորիայի հետևից . . . . .                     | 5  |
| II. Տնտեսական զարգացման թեորիայի առարկան . . . . .                   | 6  |
| III. Պարբերացման հիմունքի շփոթություն . . . . .                      | 9  |
| IV. Սպառում, քաշխում, փոխանակություն . . . . .                       | 14 |
| V. Արտադրության ճյուղերը . . . . .                                   | 17 |
| VI. Արտադրության միջոցները . . . . .                                 | 20 |
| VII. Արտադրական հարաբերությունների տեսակները . . . . .               | 23 |
| VIII. Գույքային հարաբերությունները . . . . .                         | 27 |
| IX. Թեորիայի առաջին ձևավորումը . . . . .                             | 30 |
| X. Թեորիայի յերկրորդ ձևավորումը . . . . .                            | 33 |
| XI. Արձագանգներ մարքսիստական կլասսիկ գրականու-<br>թյան մեջ . . . . . | 38 |
| XII. Թեորիայի յերրորդ ու վերջնական ձևավորումը . . . . .              | 44 |
| XIII. Տնտեսական զարգացման պարբերացումն ըստ կարլ<br>Մարքսի . . . . .  | 49 |
| Հավելված. — Վերապահություններ (համահնարկ) . . . . .                  | 53 |



# ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ (ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ) ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## I Առանձին գրույկներով

1. Խ ա չ ա տ ու ը Ս ը ո վ յ ա ն. — գրական-պատմական վերլուծություն, Վաղարշապատ, 1910,
2. Հ ո ղ ի վ ի շ տ ը Մ ու ը ր ա ց ա ն ի յ ե ը կ ե ը ու մ. — գրական-պատմական վերլուծություն, Վաղարշապատ 1911,
3. Մ ի ք ա յ ե լ Ն ա լ ը ա ն դ յ ա ն. — գրական-պատմական վերլուծություն, Վաղարշապատ, 1913,
4. Հ ա յ գ յ ու ղ ը Հ ո վ հ ա ն ն ե ս Թ ու մ ա ն յ ա ն ի յ ե ը կ ե ը ու մ. — գրական-պատմ. վերլուծություն, Յերևան, 1924,
5. Կ ա ը լ Մ ա ը ք ս ի տ ն տ ե ս ա կ ա ն զ ա ը գ ա ց մ ա ն Թ ե ո ը ի ա ն, Ա. տպ. Յերևան, 1925, Բ. տպ. 1926 ու
6. Ա ը ս ե ն Թ ո խ մ ա խ յ ա ն. — գրական-պատմական ակնարկ: Հավելված. — Առաջին գաղափարական ավազակը հայոց մեջ — Մերկե-Կուլարի Տեր-Մզրախ, 1791—1792 թ. թ. («Հերմես» հրատարակչության հրատարակություն), Յերևան, 1926:

## II Պարբերականներում


7. Մ ի ջ ա վ ա յ ը ի Թ ե ո ը ի ա ն (Գեղարվեստ» հանդես, Թիֆլիս, Բ. տարի, 1899, № 3),
8. Շ ի ը վ ա ն զ ա դ ե յ ի վ ե պ ե ը ի ն յ ու թ ը («Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1910, № 4, ապրիլ),
9. Մ ե ը կ ա ն տ ի լ ի գ մ ը հ ա յ ո ց մ ե ջ («Հորիզոն» ռաթերթ, Թիֆլիս, 1913, №№ 268 ու 269),
10. Հ ա ն գ ու յ ց ի լ ու ծ ու մ ը. — Մ. Նալբանդյանի աշխարհայացքի բնորոշման խնդրի շուրջը («Հորիզոն» ռաթերթ, Թիֆլիս, 1914, №№ 6, 10 ու 12),
11. Ս ի մ ե ո ն կ ա Թ ու ղ ի կ ո ս ի «Հ ի շ ա տ ա կ ա ը ր ա ն ի» ծածկագիրը («Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա.—Բ, Վաղարշապատ, 1921—1922),
12. Կ ա ը ծ ե ց յ ա լ Շ ա պ ու հ ը. — «Պատմություն Շապհոյ Բագրատունւոյ» գրքույկի հեղինակը վորոշելու խնդրի շուրջը



- («Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա—Բ, Վաղարշապատ, 1921—1922),
13. Հայ ազատագրական շարժման յերկու հոսանք XVIII դարի վերջերում («Նորք» հանդես, Յերևան, 1922, Ա. գիրք),
14. Բահրան ու մյուս լք լք XVll—XVlll դարերում («Նորք» հանդես, Յերևան, 1923, Բ. գիրք),
15. Յերկրագործական հավելյալ արդյունքի նորման XVll—XVlll դարերում ու XIX դարի սկիզբին երում («Նորք» հանդես, Յերևան, 1923, Գ. գիրք),
16. Հայանդրանիկ պարբերականն ու նրա խմբագիրը («Վերելք» հանդես, Յերևան, 1924, № 2—3),
17. Ֆրանսական մեծ հեղափոխությունն ու ժամանակակից հայերը («Նորք» հանդես, Յերևան, 1924, Դ. գիրք),
18. «Կոմմունիստական Մանիֆեստի» հայերեն թարգմանությունները 1887-ից մինչև 1924 թ. («Վերելք» հանդես, Յերևան, 1924, № 4-5)
19. Հայաստանում բամբակագործությունը, վերականգնելու ելն դլայնելու նպատակով 1924-1929 թ. թ. («Վերելք» հանդես, Յերևան 1924, № 4-5),
20. Անհայտ ազանդավորներ հայոց մեջ XVI ու XVll դարերում («Հանդես ամսորյա», Վիեննա, 1926):

### Պատասխանները սպագրության յեվ լույս կտեսնեն

21. Հաս, սակուրաժ.—Հայաստանի տնտեսական զարգացման պատմության խնդիրների շուրջը,
22. Վահան.— Հայաստանի տնտեսական զարգացման պատմության խնդիրներից,
23. Միգադտնիք վիմական արձանագրություններ մեջ և նրան շանակությունը Հայաստանի տնտեսության պատմության համար,
24. Հայերեն գրավոր նումերացիայի զարգացման համառոտ ուրվագիծ ու
25. Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների արանքային բառարան:









3K14

504.

ԳԻՆԸ 75 4ԱՊ.

A II  
50486

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.  
  
220050486

ՏՊԱՐԱՆ „ԶԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ



## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԹԵՈՐԻԱՅԻ ՀԵՏԵՎԻՑ

Մարքսիստական տնտեսագիտության յերկու մասերը — մարքսիստական քաղաքատնտեսությունն ու տնտեսական զարգացման մարքսիստական թեորիան — հավասարապես մշակված չեն մարքսիզմի հիմնադիրներին կողմից։ Մինչդեռ մարքսիստական քաղաքատնտեսությունը կարող է ցույց տալ այնպիսի մի նշանավոր կոթող, վորպիսին է «Կապիտալը» սխտեմատիկ ու խոշոր հատորներով, տնտեսական զարգացման մարքսիստական թեորիան զուրկ է հիմնադիրներից հատկապես այս ասպարիզին նվիրված փոքրիկ գրքույկից ել։

Այս է պատճառը, վոր յերբեմն մարքսիստները, վորոնք ընդհանրապես համերաշխ են քաղաքատնտեսական խնդիրներին, որինակ, արժեքի, փողի, կապիտալի, վաստակի, ռենտայի ու այլոց նկատմամբ, տարակարծիք են լինում, յերբ խոսքը գալիս է տնտեսական զարգացման թեորիային։ Քիչ չէ պատահում, վոր մարքսիզմի անուհով յերդվող հեղինակներ անգիտակցաբար տնտեսական զարգացման այնպիսի թեորիաներ են մոծում գրականության մեջ, վորոնք հաճախ լիովին հակամարքսիստական են լինում, իսկ լագագույն դեպքում՝ կիսամարքսիստական։ Յեթե սրա վրա ավելացնենք, վսր պատահում են դեպքեր, յերբ վոչ միայն մարքսիզմը չդավանող, այլ և մարքսիստի հռչակ ունեցող մարդիկ ել լրջորեն պնդում են, թե մարքսիզմը տնտեսական զարգացման հատուկ թեորիա չունի, ապա հասկանալի կլինի, վոր ստեղծված դրութունն այնքան ել մխիթարական չէ եպիդոհներին համար։